

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ**

**ԳԱԼԱՏՅԱՆ ՄԻՀՐԱՆ ՎԱՐԴԱԿԵՍԻ**

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՍՈՑԲԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՀԻՄՆԱԽԱՆԴՐԱՅԻՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ**

**Ե.00.04. «Ազգագրություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների դրկուորի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2016**

---

**ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ  
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

**ГАЛСТЯН МИГРАՆ ВАРДГЕСОВИЧ**

**СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЕ ПРОБЛЕМЫ ТРУДОВОЙ МИГРАЦИИ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

**АВТОРЕФЕРАТ**

**Диссертации на соискание ученой  
степени доктора исторических наук  
по специальности 07. 00.04 «Этнография»**

**Երևան – 2016**

**Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և պահպանության ինստիտուտի գիտական խորհրդում**

Պաշտոնական ընդրիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆ. Է.Գ. Մինասյան  
պ.գ.դ., պրոֆ. Ս.Ս. Մկրտչյան  
պ.գ.դ. Ռ.Ս. Կարապետյան

Սարացատար կազմակերպություն՝ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության թանգարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. Նոյեմբերի 10-ին՝ ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գրքող ԲՈՀ-ի 007 հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցե՝ Երևան-0025, Զարենի 15):

Աստենախոսությանը կարելի է ծանրանալ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2016թ. հոկտեմբերի 10-ին

## Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար

պատմական գիտությունների թեկնածու  Հ. Ստեփանյան

**Тема диссертации утверждена на заседании ученого совета Института археологии и этнографии НАН РА**

**Официальные оппоненты:** д.и.н., проф. Э.Г. Минасян  
д.и.н., проф. С.С. Мкртчян  
д.и.н. Р.С. Карапетян

**Ведущая организация:** Мемориальный комплекс Сардарапатской битвы, Национальный музей этнографии Армении и истории освободительной борьбы.

**Защита состоится 10 ноября 2016 г. в 14.00 часов, на заседании специализированного совета 007 по археологии и этнографии при Институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван-0025, ул. Чаренца, 15).**

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института археологии и этнографии НАН РА

Автореферат разослан 10 октября 2016 г.

### **Ученый секретарь специализированного совета:**

кандидат исторических наук

*H. Wink*

У.А. Мелконян

## ԱՏԵՆԱԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՍՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** XX դարի վերջին և XXI դարի սկզբին աշխարհագրական փոփոխությունների, հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման, տնտեսության համաշխարհայնացման, պատերազմների, ներգաղթի մողելում տեղի ունեցող փոփոխությունների հետևանքով բնակչության միջականացման տեղաշարժերը ողջ աշխարհում ընդգրկել են մեծ մասշտաբներ՝ ներառելով բազում էրինիկ հանրություներ և հասարակական կյանքի տարբեր ոլորտներ: Միգրացիան իր անմիջական ազդեցությունն է թողնում տնտեսական, քաղաքական, միջերնիկ հարաբերությունների վրա և դառնում սոցիալ-վակուումային փոփոխությունների կարևոր գործունեությունը:

Հետխորհրդային Հայաստանի առջև ծառացած կարևոր հիմնախնդիրներից է զանգվածային արտագաղթը՝ սոցիալ-տնտեսական, էթնոժողովրդագրական և մշակութային հետևանքներով: Պատմական հայրենիքը կորցրած և բռնազարդ տեսած հայ ժողովրդի համար արտագաղթի երևույթը տագնապահարուց է և մեր օրերում խոր ու համակարգային վերլուծության կարիք ունի: Օրեցօր աճող բնակչության աշխատանքային միգրացիան, որպես Հայաստանից արտագաղթի կարևոր գործոն, նոր երևույթ չէ. այն ուղեկցում է հայ էթնոսին իր պատմական զարգացման ողջ ընթացքում: Աշխատանքային միգրացիան ժամանակակից հայկական հասարակությունում ընդհանուր առմամբ արժեուրվում է որպես տնտեսական և ժողովրդագրական երևույթ, իսկ անհատի, ընտանիքի, էթնոսի և հասարակության մակարդակով պատշաճ ուշադրության չեն արժանանում երևույթի էթնոմշակութային և սոցիալական հետևանքները: Հետևաբար, Հայաստանի համար արդիական են նաև միգրացիայի հետևանքով առաջ եկած այդ իրողությունների ուսումնասիրությունը և հետագա կարգավորման առումով տեսական ու գործնական նոր մոտեցումների մշակումը: Աշխատանքային միգրանտները, երկար տարիներ ապրելով և աշխատելով այլէթնիկ միջավայրում, շփվելով տեղի բնակչության հետ, կրում են մշակութային որոշակի ազդեցություն: Այդ առումով արդիական հիմնախնդիր է, թե միգրացիան ինչ ազդեցություն է թողնում նրանց մշակույթի, լեզվի, ինքնազիտակցության վրա, և այդ ուրոտում ինչ համամասնության մեջ են բուն էթնիկ ու փոխառված մշակութային տարրերը: Մյուս կողմից՝ միգրանտներն արտահանում են իրենց մշակութային արժեքները, քանի որ նրանք միայն լոկ տեղաշարժվողներ չեն. սոցիալական հարաբերությունների և ինստիտուտների մի համակարգից տեղափոխվում են մեկ այլ՝ սոցիալ-մշակութային նոր միջավայր:

Արդի փուլում կարևորվում է նաև այլէթնիկ միջավայրին միգրանտների ձևուման խնդիրի ուսումնասիրությունը. մասնավորապես միգրացիայի հետևանքով նրանց շրջանում էթնոտարանշատող (մենք-նրանք) և էթնոմիավորող գործներացներում տեղի ունեցող փոփոխությունները:

Հայաստանի բնակչության աշխատանքային միգրացիայի ուսումնասիրությունը ներկայում կարևորվում է նաև միջերնիկ հարաբերությունների

կարգավիրման տեսանկյունից:

**Ատենախոսության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության գլխավոր նպատակը Հայաստանից աշխատանքային միզրացիայի հետևանքով միզրանտների և նրանց ընտանիքների, էթնոսի և հասարակության մակարդակով տեղի ունեցող էթնոմշակութային և սոցիալական փոխակերպումների բացահայտումն է՝ նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանների համեմատական լայն համատեքստում:

**Հետազոտության օբյեկտը** Հայաստանի քաղաքացիներն են (նաև ՀՀ ազգային փորբամասնությունները), որոնք խորհրդային շրջանում և 1990-ական թվականներից հետո կարճաժամկետ (մինչև մեկ տարի) և երկարաժամկետ (մեկ տարի և ավելի) տևողությամբ աշխատանք գտնելու նպատակով մեկնել են հանրապետությունից:

**Հետազոտության առարկան** Աշխատանքային միզրանտների շրջանում տեղի ունեցող էթնոմշակութային և սոցիալական փոխակերպումներն են:

Ատենախոսությունում առաջադրվել և քննարկվել են հետևյալ հիմնախնդիրները.

- պատմական լայն համատեքստում վերլուծել արտագնացության զարգացման միտումները և այդ տեսանկյունից՝ հայ էթնոսի փորձը և ավանդույթները.
- բացահայտել աշխատանքային միզրանտների սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը և էթնիկ գործոնի դերը այդ խմբերի ձևավորման գործում.
- քննարկել աշխատանքային միզրացիայի պատճառները և միզրացիոն վարքի ձևավորման էթնիկ գործոնները.
- վերլուծել միջեթնիկ շփումների ազդեցությունը մշակութային ինքնության վրա և ընտանիքի մոդելում փոխակերպումների հարցում.
- ուսումնասիրել աշխատանքային միզրացիայի սոցիալ-մշակութային և էթնոժողովրդագրական հետևանքները:

Ատենախոսությունում որպես կանխավարկած առաջ է քաշվել այն ենթադրյունը, որ աշխատանքային միզրանտների շրջանում տեղի ունեցող սոցիալական և էթնոմշակութային փոխակերպումները պայմանավորված են այլէթնիկ սոցիալ-մշակութային միջավայրի բնութագրերով, տեղի բնակչության հետ շփումների տևողությամբ և միզրանտների սոցիալական ներուժով (սեռ, տարիք, կրթություն, որակավորում, մասնագիտական պատրաստվածություն) և կրուտակած փորձով:

**Հիմնախնդիրի ուսումնասիրության աստիճանը:** Հայագիտության մեջ այդ հիմնախնդիրն ուսումնասիրվել է ազգագրական և բանահյուսական տեսանկյունից՝ անդրադարձնալով վաղ և միջնադարյան ժամանակաշրջաններում ձևավորված պանթևության թեմային: Այս առումով հայ մեծերից իրենց անուրանալի վաստակն ունեն Դ. Ալշանը, Բաֆֆին, Մ. Նաբանյանը, Գ. Սրվանձտյանը, Կոմիտասը, Մ. Աբելյանը, և այլք, որոնք գրաղվել են միջնա-

դարյան ձեռագրերով, ժողովրդի մեջ ապրող երգերի հավաքման և այդ թեմայի քննական վերլուծության աշխատանքներով։ Նշված հիմնախնդրի պարզաբանման հարցում մեծ է Ե. Լալայանի և Ստ. Լիսիյանի վաստակը։ Նրանք իրենց աշխատություններում հանգամանորեն քննարկել են հայոց մեջ պանդխտության տարածվածությունը, պատճառները, մասնակիցների գրադարձության ոլորտները, մեկնելու վայրերը, ինչպես նաև երևույթի ազդեցությունը պանդուխտի ընտանիքի վրա։ XIX դարի 80-ական թվականներից պանդխտության թեմայի վերաբերյալ արժեքավոր նյութեր են հրատարակվել «Սուրճ», «Մշակ», «Արձագանք», «Մասիս», «Նոր-դար» և այլ պարբերականներում։ Արտագնացության մասշտաբների, շարժունակության վերաբերյալ ուշագրավ նյութեր կան նաև նախահեղափոխական շրջանում լույս տեսած վիճակագրական ժողովածուներում։ Արտագնացության խնդրի արձարձման առումով կարևորում ենք նաև խորհրդային տարիներին ընդունված կուսակցական-կառավարական փաստաթղթերը, որոնք հիմք են այդ երևույթի վարչական կարգավորման համար, ինչպես նաև համամիութենական մարդահամարի տվյալները։ Խորհրդային տարածքում աշխատանքային միգրացիայի պատճառների, միտումների, ձևերի, ուղղությունների վերաբերյալ առկա են բազմաթիվ գիտական աշխատություններ և հետազոտություններ։ Այդ շրջանում, պայմանավորված միգրացիոն գործընթացներով, արժևորվել են նաև միգրանտների ադապտացիայի և սոցիալ-մշակութային փոփոխությունների խնդիրները։

Ստենախտության տեսական հիմքում հաշվի են առնվել Է. Ռավենշտեյնի, Է.Ս. Լիի, Մ. Ֆրիմանի, Պ. Սեմյուելսոնի, Դ.Մեսեի, Ի. Վալերյանի, Ս. Սասենի, Ա. Միթի, Ա. Ռոնա-Տասի, Յու. Հարությունյանի և նրա գործընկերներ Պ. Բուդիկի, Օ. Բրեդնիկովյայի, Ե. Սարովսկայայի, Ե. Տյուրյուկանովյայի, Վ. Դյատլովի, Ա. Ռյազանցի և այլ հեղինակների միգրացիայի վերաբերյալ գիտական մի շարք կարևոր մոտեցումները։

Հայաստանում աշխատանքային միգրացիայի ուսումնասիրության արդի վիճակը վերլուծելիս կարող ենք առանձնացնել հետևյալ մի քանի ուղղությունները։

**Առաջին՝** միգրացիայի վերաբերյալ գործող ՀՀ օրենքները, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների միջև կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերը, որոնք այդ խնդրի կարգավորման կարևոր իրավական փաստաթղթերն են։ Այդ հարցում էական են նաև կառավարության շրջանակներում գործող ինստիտուցիոնալ կառույցների իրականացրած ընտրանքային հետազոտություններն ու արտաքին միգրացիայի վերաբերյալ պարբերաբար հրապարակվող վիճակագրական տվյալները։ Դրանք հիմնականում անդրադարձում են միգրացիայի տնտեսական պատճառներին, միգրանտների սոցիալ-ժողովրդագրական նկարագրին, մեկնելուների և վերադարձուների թվին, միգրացիայի ուղղություններին, միգրանտների դրամական փոխանցումներին։ **Երկրորդ՝** Հայաստանի գիտական շրջանակներում, մասնավորա-

պես տնտեսագետների, ժողովրդագիրների, սոցիոլոգների, ազգագրագետների, և գիտական հետազոտական կենտրոնների աշխատանքային միգրացիայի վերաբերյալ հրատարակած գիտական աշխատությունները։ Այս տեսանկյունից արժնորում ենք Վ. Խոջաբեկյանի, Գ. Պողոսյանի, Լ. Հարությունյանի և Ռ. Եգանյանի աշխատանքները, որոնք անդրադարձել են միգրացիայի սոցիալ-տնտեսական միջարք կարևոր հիմնահարցերի։ Ազգարանության առումով առանձնակի ուշադրության են արժանի Վ. Սվագյանի, Հ. Մարությանի, Ռ. Կարապետյանի գիտական աշխատությունները, որոնք վերաբերում են ինքնույշյան և հայկական սփյուռքի ձևավորման հիմնախնդիրներին։ Պատմական համատեքստում արտագնացության հետևանքով աղձնիքահայերի նահապետական գերդաստանի տրոհման և փոքր ընտանիքների ձևավորման հարցերին է անդրադարձել Ռ. Նահապետյանը։ ՀՀ-ում սոցիալ-տնտեսական վերափոխումների գործնկացում բնակչության տեղաշարժերի և դրանց սոցիալ-քաղաքական հիմնախնդիրներն է քննարկել Է. Մինասյանը։ **Երրորդ** միջազգային կառույցների և Հայաստանում գործող ոչ կառավարական կազմակերպությունների միգրանտների հետ կատարած աշխատանքները և իրականացրած հետազոտությունները։ Հասարակական կազմակերպությունների այդ աշխատանքները հիմնականում ֆինանսավորում են միջազգային կառույցները թելադրելով աշխատանքի հնարավոր ուղղությունները և մերորդները։

**Տեսական և մեթոդաբանական մոտեցումները**։ Ասենախոտսությունում աշխատանքային միգրացիայի սոցիալ-մշակութային հիմնախնդիրների ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը ազգագրությունում և էթնոսոցիոգիայում ընդունված միջատարկայական համալիր մոտեցումներն են, իսկ աշխատանքի էմպիրիկ հիմքերն ապահովել են հեղինակի իրականացրած էթնոսոցիոգիական հարցումները և հավաքած դաշտային ազգագրական նյութը, որը ժամանակագրական առումով ընդգրկում է 1980-ական թվականներից մինչև մեր օրերը։ Գիտարշավների և անհատական գործուրումների միջոցով 1986-1988թթ. էթնոսոցիոգիական հարցումներ և դաշտային նյութեր են հավաքվել ՀԽՍՀ Կամոյի, Մարտունու, Սպիտակի, Կալինինյի, Արթիկի, Ախուրյանի, Աբովյանի վարչատարածքային շրջաններում, 1999 թ. Երևան քաղաքում, 2005-2007 թթ. Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի, Վայոցձորի, Լոռու, Արմավիրի մարզերում, 2007 թ., 2008 թ. և 2011 թ. Տավուշի, 2009 թ. Սյունիքի, 2012 թ.՝ Լոռու, 2013 թ.՝ Կոտայքի, 2014 թթ.՝ Գեղարքունիքի, Արմավիրի, Արարատի, Լոռու, Շիրակի, Արագածոտնի մարզերում և Երևանում բնակվող ՀՀ ազգային փոքրամասնությունների շրջանում, 2015 թ.՝ Արարատի մարզում։

Ընդհանուր առմամբ, հարցմանը մասնակցել է միգրանտ ունեցող 1344 ընտանիք։

Միգրանտների և նրանց ընտանիքների շրջանում անցկացվել են նաև 103 խորացված և 39 ֆոկուսիմբային հարցումներ։ Նրանց վերաբերյալ տեղեկա-

տվությունը հավաքվել է Եթնոտցիոլոգիական հարցաթերթային հարցման միջոցով, տարածքային տիպի եռաստիճան ընտրանքի ձևավորման սկզբունքով՝ նախ հիմք ընդունելով մարզերի բնակչության միջավետական տեղաշարժերի վիճակագրական ցուցանիշները, այնուհետև բնակավայրի տիպը (գյուղ-քաղաք) և միգրանտներ ունեցող և չունեցող ընտանիքները։ Նկատի ունենալով ՀՀ-ում ազգային փորբամասնությունների հոծ և ցրիվ բնակվելու հանգամանքը՝ վերադարձած միգրանտների կամ նրանց ընտանիքների բացահայտման նպատակով կիրառվել են նաև «զտման» և «ձևակույտի» մեթոդները։

Եթնոտցիոլոգիական այդ հարցման արդյունքներն արժեքավոր են նրանով, որ հայ ժողովրդի արտաքին միգրացիոն գործընթացների առումով դրանք ընդգրկում են սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական զարգացման երկու տարբեր ժամանակագրական փուլ՝ հնարավորաբերյուն ընձեռված այդ երևույթի միտումների վերաբերյալ ստանալու համեմատական հարուստ նյութ։ Ըստ որում, այդ երկու ժամանակահատվածներում օգտագործվել են նույն հարցաթերթը՝ հարցերի որոշ փոփոխություններով։

Եթնոտցիոլոգիական հետազոտությունների անցկացման և մշակման գործընթացում ընտրված բազային հատկանիշների գրանցված վիճակագրական շերտում չի գերազանցում թույլատրելի հիմք ստուգում։

**Աշենախոտության գիտական նորույթը և գործնական նշանակությունը:** Աշխատանքի գիտական նորույթը, դրա գործնական և կիրառական նշանակությունն ամփոփվում են հետևյալ դրույթներում։

- Հայաստանում աշխատանքային միգրացիայի կրնմշակութային և սոցիալական փոխակերպումների համային վերլուծությունը կատարվում է առաջին անգամ։
- Պատմական լայն կտրվածքով՝ խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջաններում, աշխատանքային միգրացիայի վերաբերյալ պարբերաբար իրականացրած հետազոտությունների արդյունքների հիման վրա համեմատվում և բացահայտվում է հայ կրնուի կյանքում կատարված սոցիալական և կրնմշակութային փոփոխությունների ամբողջական բնութագիրը։
- Աշխատանքային միգրացիայի պատճառների, միգրացիոն վարքագիծի ձևավորման վրա ընտանիքի կառուցվածքի, խմբերի ձևավորման առանձնահատկությունների, ծախսերի ուղղվածության հարցում հասուլ ուշադրություն է դարձվում էրնիկ գործոնի դերին, այլ՝ կրնիկ միջավայրում նրանց ադապտացիայի և մշակութային ինքնության պահպանման խնդիրներին։
- Աշխատանքում առաջին անգամ ուսումնասիրվում և համեմատվում են հայերի և հայաստանաբնակ ազգային փորբամասնությունների աշխատանքային միգրացիայի միտումները և առանձնահատկությունները, միգրացիայի դերը ազգամիջան հարաբերությունների գործում։

- Անհատի, ընտանիքի, համայնքի, եթոսի և հասարակության մակարդակով ներկայացվում է աշխատանքային միզրացիայի երկակի ազդեցության համեմատական մոդելը:
- Ատենախտառության գործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ տեղ գտած դրույթները հնարավորություն են տալիս կատարելու մի շարք առաջարկություններ Հայաստանի բնակչության աշխատանքային միզրացիայի հետագա կարգավորման և նոր հայեցակարգերի և քաղաքականության մշակման առումով:
- Ատենախտառությունում խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջաններում կատարված երնտոցիորգիական հետազոտության համեմատական տվյալների մեծ մասն առաջն անգամ է դրվում գիտական լայն շրջանառության մեջ:
- Ատենախտառությունում տեղ գտած մի շարք հիմնահարցեր այդ խնդիրներով գրաղվող մասնագետների համար կարող են ունենալ տեսական ձևաչղողական և գործնական նշանակություն:

**Աշխատանքի փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը:** Աշխատանքն ամբողջությամբ քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի եթոսոցիոլոգիայի և ազգագրության բաժինների համատեղ նիստում: Ատենախտառության հիմնական դրույթները հրատարակված են երկու մենագրություններում և երեսունից ավելի գիտական հոդվածներում: Ատենախտառության մեջ քննարկվող հայցակետները, դրույթներն ու հարցադրումները հեղինակը ներկայացրել է հանրապետական և միջազգային գիտաժողովներում, դրանք ներկայացվել են Հայաստանում և արտասահմանում լրաց տեսած հրատարակություններում:

**Աշխատանքի կառուցվածքը:** Ատենախտառությունը բաղկացած է ներածությունից, իննոց գլուխներից համապատասխան բաժիններով, եզրակացությունից, հապավումների, օգտագործած սկզբնադրյուրների և գրականության ցանկից:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում ներկայացված են ատենախտառության արդիականությունը, նպատակն ու խնդիրները, դրա իրականացման տեսական և մեթոդաբանական հիմքերը, աղյուրները և օգտագործած գրականության համառոտ տեսությունը, գիտական նորույթը և գործնական նշանակությունը:

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ

Հայաստանում աշխատանքային միզրացիայի սոցիալ-մշակութային հիմնախնդիրները բացահայտելու համար այս գլուխ նպատակահարմար ենք

համարել անդրադառնավ Հայաստանում և արևմտյան Երկրներում միզրացիայի վերաբերյալ գոյություն ունեցող տեսություններին և մոտեցումներին: Դրանք կնպաստեն Հայաստանից աշխատանքային միզրացիայի տեսական և գործնական խնդիրների պարզաբանման և հետագա կարգավորման առումով նոր մոտեցումների ձևավորմանը:

### 1.1. Միզրացիայի ռւսամասիրության տեսական հիմնահարցերը

Արդի շրջանում միզրացիան ընդհանուր առմամբ արժևորվում է որպես գուտ տնտեսական և ժողովրդագրական երևոյթ, և միզրանտի տեղն ու դերը դիտարկվում են այդ գիտակարգերի տեսանկյունից: Տնտեսական մոտեցման կորլմանիցները երբեմն անտեսում են միզրացիան առաջացնող սոցիալ-մշակութային գործոնները և նոր միզրավայրում նրանց արագտացիայի առանձնահատկությունները: Է. Ռավենշտայնը միզրացիայի գլխավոր պատճառ համարում է տնտեսական գործոնը և ավելի բարձր վարձատրվող աշխատանքը, Է. Ս. Լին առանձնացնում է միզրացիա առաջացնող գործոնների տարբեր խմբեր՝ պահպանող, ձգող և վանող, որոնք պայմանավորում են միզրանտների ժամանումը և մեկնումը: Ըստ նոր դասական տեսության (Ս. Ֆրիդման, Պ. Սեմյուլյան) միզրացիայի ազդակ են համարվում ելքի և մուտքի տարածքների տարբերությունները: Միզրացիոն հոսքերը տեղի են ունենում ցածր վճարվողից դեպի բարձր վճարվող տարածաշրջաններ՝ դրանց միջև տեղի տալով կապիտալի շրջանառության:

Հայաստանից աշխատանքային միզրացիայի հիմնախնդիրների համար տերսուում անդրադառնանք նաև երկակի աշխատանքի շուկայի տեսությանը, ըստ որի՝ միջազգային միզրացիան պայմանավորված է ներգաղթյալների աշխատուժի մշտական պահանջարկով, որն առկա է զարգացած երկրների տնտեսական կառուցվածքում: Ծագման երկրներից արտագաղթի համար կարևորվում են ցածր աշխատավարձի և բարձր գործազրկության գործոնները, իսկ ընդունող երկրներում՝ ընդհակառակը, օտարերկրյա աշխատուժի պահանջարկը: Միզրացիայի պատճառներին և հետևանքներին համաշխարհային համակարգերի տեսության շրջանակներում անդրադարձել է նաև Ի. Վալերյանը միզրացիան քննարկելով աշխարհ-համակարգ հարացույցի (պարագիզմի) համատերսուում: Ըստ նրա՝ աշխարհի բաժանումը տեղի է ունենում կենտրոն-ծայրամաս ուղղությամբ, որտեղ առաջինը հանդես է գալիս որպես միզրանտ ընդունող, իսկ երկրորդը՝ ուղարկող տարածք: Ըստ սոցիալական ցանցերի տեսության (Դ. Սեսեյ) միզրացիան տնտեսական զարգացման հետևանքով քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքում լայն ինտեգրացիոն գործընթացների արդյունք է: Ըստ նրա՝ աշխատավարձերի միջև տարբերությունները միզրացիայի հիմնական պատճառներից չեն. որպես գլխավոր գործոն՝ նա նշում է աշխարհում ստեղծվող միզրացիոն կառուցվածքները և ցանցերը, որոնք ապահովում են միզրանտի և նրա հայրենիքի, սփյուռքի հետ կապերն ու դրամական փոխանցումները: Այս տեսանկյունից սոցիալական ցանցերի վերաբերյալ տեսությունները հնարա-

վիրություն են տալիս լրասարանելու նաև Հայաստանից աշխատանքային միզրացիայի շարունականության խնդիրը, մասնավորապես, թէ սոցիալական ցանցերն ինչ դեռ ունեն հանրապետությունից միզրացին հոսքերի ձևավորման գործում: Սոցիալական ցանցերը դիտարկում են նաև էթնիկ չափումով: Վստահությունը, հիմնված էթնիկ նույնականացման վրա, թույլ է տալիս ձևավորել «էթնիկ» սոցիալական ցանցեր, որոնք դրուացնում են տեղեկատվության շրջանառությունը այդ ցանցերի միջև, նվազեցնում հնարավոր գործարքային ծախսերը, որոնք կարող են կապված լինել անվստահության գործոնով: Այդ խնդրին անդրադարձել է մշակութային դիմուլիոնիզմի տեսությունը, ըստ որի մշակութային տարրերը տարածվում են մի վայրից մյուսը: Միզրացիայի միջոցով տեղի է ունենում տարբեր մշակույթների փոխազդեցություն, որի ընթացքում միզրանտը փորձում է լուծել երկու կարևոր խնդիր՝ միաժամանակ փորձելով պահպանել սեփական մշակութային ինքնությունը և յուրացնել օտար մշակութային արժեքները: Հետևաբար, նրանք հայտնվում են երկու տարրեր մշակույթների և սոցիալական կառուցվածքների սահմանագծում՝ լիարժեքորեն չներառվելով ո՛չ մեկի և ո՛չ էլ մյուսի մեջ:

1990-ական թթ. սկզբին մի շարք հետազոտողներ, թերահավատորեն մոտենալով միզրանտների ինստեգրացում հասկացությանը, առաջարկեցին անդրազգայնության տեսությունը՝ շրջանառության մեջ դնելով «անդրմիզրանտներ» հասկացությունը՝ որպես միզրացիայի միջազգային հետազոտություններում նոր հարացույցի հիմք: Անդրմիզրանտները միաժամանակ ապրում են մի քանի տարածքում և ներառվում են մի քանի հասարակություններում, ստեղծում են նոր փոխկազմակցվածություն, հաստատվում նոր միջավայրում, սակայն առանձնահատուկ կապված են նաև իրենց ազգային պետությանը և տարածքներ: Նոր միջավայրում նրանք ձևավորում են սոցիալական նոր կապեր՝ միաժամանակ շարունակելով գործել իրենց նախկին հասարակության սոցիալական ցանցերում: Անդրմիզրանտները, միաժամանակ ապրելով ուղարկող և ընդունող հասարակություններում, ստեղծում են անդրազգային սոցիալական տարածք:

## 1.2. Աշխատանքային միզրացիայի երևոստիոլոգիական ուսումնամասամբության մեթոդաբանական մոտեցումները

«Միզրացիա» (լատիներեն *migratio*, վերաբնակվել) եզրույթը բնորոշում է բնակչության, մարդկանց տեղաշարժը կապված մշտական կամ ժամանակավոր բնակավայրը փոխելու հետ: Սակայն առօրյա քննարկումներում դրա փոխարեն երբեմն օգտագործվում է նաև «գաղթ» եզրույթը. բովանդակային առումով դրանք չեն: Միզրացիան, ընդհանուր առմամբ, նաև կամավոր տեղաշարժի արդյունք է, իսկ գաղթը բռնի տեղահանության: Հայ իրականության մեջ գաղթը հիմնականում գուգորդվում է Օսմանյան Թուրքիայի՝ հայերի նկատմամբ իրականացրած ցեղասպանության և բնի տեղահանության երևույթի հետ: «Միզրացիա» եզրույթի հետ ներկա պայմաններում որպես հոմանիշ օգտագործվում է նաև «արտազալլ» հասկացությունը: Դրանում

առաջին հերթին նկատի է առնվորմ սոցիալ-տնտեսական, քաղաքական պատճառներով մշտական բնակավայրի փոփոխությունը, որը, սակայն, նույնպես չի արտահայտում «միգրացիա» եզրույթի ողջ իմաստը:

Ներկա պայմաններում «աշխատանքային միգրացիա» եզրույթի փոխարեն որպես հոմանիշ զիտական գրականության և առօրյա ժողովրդախոսակցական լեզվում կիրառվում են «փոպանչներ», «արտագնացներ», «սեղոնային միգրանտներ», «տնտեսական միգրանտներ» եզրույթները: Խորհրդային տարիներին տեղի ունի բնակչության ժողովրդախոսակցական լեզվում միգրանտներին բամահրանքով անվանում էին «շաբաշնիկներ», «վայրի բրիգադներ», «էժան վաստակ որոնողներ», «սերմնագրավներ», «վրունկներ»: Հետխորհրդային շրջանում ՌԴ-ում աշխատանքային միգրանտների նկատմամբ կիրառում են նաև ծագման տարածաշրջանին և էթնիկությանն առնչվող միշտք արտահայտություններ՝ բացասական պիտակավորմամբ: Օրինակ, ուստերեն կավազցի-կովկասցիներ անվանմամբ պիտակավորում էին այդ տարածաշրջանից մեկնած բոլոր աշխատանքային միգրանտներին՝ անկախ ազգային պատկանելությունից, իսկ «ազնատ»՝ Միջին Ասիայի պետություններից եկվորներին:

Հայաստանի տարբեր մարզերի բնակչության կողմից օգտագործվող փոպանչներ» (խոպան գնացողներ) եզրույթի ծագումնառությունը կապված է Հայրենական մեծ պատերազմից հետո՝ 1950-1960-ական թվականներին, Ղազախստանում, Սիրիում, Պովոլյաներում, Ուրալում և նախկին ԽՍՀՄ-ի տարբեր շրջաններում խոպան, անմշակ հողերի յուրացման հետ: Այն ուստերեն պելինա բարի թարգմանությունն է: «Ենությունը կազմակերպեց հավաքներ, որին մասնակցեց նաև Հայաստանի բնակչությունը: Գեղարքունիքում և Շիրակում այդ գործընթացի մասնակիցներին անվանում էին խոպանչներ, իսկ Տափուշում՝ խոպանիստ: Մինչ այդ նախախորհրդային շրջանի մամուլում և գրականությունում այդ անձանց նկատմամբ օգտագործվում էր պանդուխտ եզրույթը, իսկ գործընթացն անվանվում էր պանդուխտյուն, այսինքն վտարանդի, օտարական, գաղթական, հայրենի երկրից հեռացած և օտար երկրում (երկրներում) ապրող:

«Աշխատանքային միգրացիա» եզրույթի փոխարեն ժողովրդի շրջանում հաճախ օգտագործվում է «արտագնացություն», որը նշանակում է ուրիշ տեղ գնացող, իր մշտական վայրից այլ տեղ մեկնող, այլ տեղում աշխատանք կատարող, աշխատելու նպատակով տեղից տեղ գնացող:

Մասնագիտական գրականության մեջ «սեղոնային միգրացիա», «սեղոնային միգրանտներ» եզրույթները հաճախ գործածվում են այն մարդկանց նկատմամբ, որոնք տարվա որոշակի սեղոնին հատկապես վաղ գարնանից մինչև ուշ աշուն, մեկնում են հանրապետությունից դուրս աշխատանքի և այնուհետև վերադարձնում:

Այսպիսով, տարատեսակ մեկնաբանությունների տեղիք չտալու և հասկացությունների ոլորտում հստակություն մտցնելու նպատակով աշխատու-

թյունում ընդունելի ենք համարում «աշխատանքային միգրացիա» և «արտագնացություն» եզրույթները: Սակայն այստեղ հավելենք մի կարևոր նկատում՝ ատենախոսությունը վերաբերում է միայն այն միգրանտներին, որոնք տնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով մասնակցում են Հայաստանի սահմաններից դրւու արտաքին աշխատանքային միգրացիոն գործընթացներին՝ նկատի ունենալով նաև այն աշխատանքային միգրանտներին, որոնք երկարաժամկետ (մեկ տարի և ավելի) կամ կարճաժամկետ (մինչև մեկ տարի) տևողությամբ աշխատանք գտնելու նպատակով մեկնել են հանրապետությունից:

Աշխատանքային միգրանտների ուսումնասիրությանը ցուցաբերվել են հետևյալ մոտեցումները. վարչական՝ անհատները ցանկացած ժամանակ քաղաքական որոշումների հիման վրա կարող են վերաբնակեցվել այլ աշխարհագրական տարածքում, նույնիսկ առանց բռնի տեղահանման: Դրան իրանում են բարոյական, գաղափարախոսական, քաղաքական և տնտեսական միջոցները: Պոզիտիվիստական յուրաքանչյուր անհատի կամ ընտանիքի միգրացիոն վարքագիծը դիտարկվում է որպես անհատական ընտրության արդյունք՝ կապված աշխարհագրական, տնտեսական, էկոլոգիական և այլ գործնների հետ: Որպես միգրացիոն վարքագիծ ձևափորման հիմք՝ հանդես են գալիս անհատների կամ ընտանիքների շահագրգուվածությունը և դրա շնորհիվ նրանց կենսամակարդարակի բարեկալվումն ու եկամուտների բարձրացումը: Սոցիոլոգիական մոտեցում՝ մարդկանց միգրացիոն վարքագիծի վրա ազդում է ոչ միայն նրանց անհատական նախապատվությունը, այլև եական են այն սոցիալական խմբերը, որոնց նրանք պատկանում են, ինչպես նաև այն ռեֆերենտ խմբերը (նաև եթնիկ), որոնց նորմերին նրանք կրողմտրուշված են: Էթնոտցիոլոգիական՝ աշխատանքային միգրանտների շարժունության առանձնահատկությունները քննարկվում են եթնիկ և պատմական զարգացման գործնների տեսանկյունից: Նշանակած մոտեցումները հնարավորություն են տայիս անհատական, ընտանեկան, եթնոսիկ և հասարակության մակարդակում բացահայտելու աշխատանքային միգրացիայի ունեցած սոցիալ-մշակութային մի շարք կարևոր հիմնախնդիրներ և կատարելու դրանց լուծմանը միտված առաջարկներ:

#### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՎԱՀԱՆՔԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՏԱՆՈՒՄ

Ուսումնասիրության այս գիյում քննարկվել են նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջաններում արտագնացության պատմական զարգացման գործնքացները: Այն հնարավորություն է տայիս ստանալու համեմատական հարուստ նյութ երևույթի պատճառների, միտումների, արտագնա խմբերի սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական կազմի, մեկնման ժամկետների, գործառույթների, սոցիալ-մշակութային ազդեցու-

թյան և այլ հիմնախնդիրների վերաբերյալ:

## 2.1. Աշխատանքային միզրացիան հայոց մեջ (XIX դարի երկրորդ կես-XX դարի սկիզբ)

Այդ ժամանակաշրջանի նյութերի քննական վերլուծությունից պարզվում է, որ արտագնացությունը, սկսած XIX դարի երկրորդ կեսից, մեծ մասշտար-ներ ընդունեց ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում՝ պայ-մանափրկած կապիտալիստական հարաբերությունների զարգացման հե-տևանքով գյուղում սկիզբ առած սոցիալական շերտավորման հանգամանքով։ Այդ պատճառով գյուղացիության մեծ մասը զրկվեց արտադրության միջոց-ներից, ծայրահետ կարիքի ու աղքատության մեջ ստիպված էր աշխատանք վնատել արդյունաբերական խոշոր կենտրոններում՝ Բաքում, Թիֆլիսում, Կ. Պոլսում և այլուր։ Նրանք այնտեղ մնում էին երկար տարիներ կամ հաստա-տում մշտական բնակություն՝ դառնալով արդյունաբերական ձեռնարկու-թյունների կադրային բանվորներ իրենց կապերը, սակայն, չսգելով հայրենի գյուղի հետ։ Այդ շրջանում պանդուխտների թիվը մեծ էր Օսմանյան Թուր-քայի տիրապետության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանում։ Եթե 1860-ական թվականներին այն կազմում էր 15 հազ. մարդ, ապա 1886 թվականին միայն Կ. Պոլսին՝ գրադարձությամբ, բեռնակրությամ։ Ծանր էին նրանց ինչպես աշխատանքային, այնպես էլ կենցաղային պայմանները, որը երբեմն հանգեցնում էր պանդուխտի մահվան։ Նրանց վերաբերյալ արևմտա-հայերի շրջանում լայն տարածում ունեին «դարիբի» և «անտունի» թեմայով երգերը։ Պանխառտության մեկնողն էր, հայրենիքում մնացողն էլ գիտակցում էին, որ օտարության մեջ ավելի վատթար վիճակ է սպասվում պանդուխտին, որ նա կա՞մ չի վերադառնալու, կա՞մ էլ վերադառնալու է հյուծված, աշխատանքի համար ոչ պիտանի։

Ինչ վերաբերում է Արևելյան Հայաստանին, ապա, ըստ վիճակագրական տվյալների, արտագնացների թիվն այստեղ զգալիորեն աճեց 1880-ական թվա-կաններից։ Հստ «Նոր-դար» թերթի տվյալների՝ 1884 թվականին 10 ամսվա ընթացքում Զանգեզուրի միայն 36 գյուղերից Բաքու և այլ վայրեր արտագնա-ցության էր մեկնել 2.608 մարդ, 1891 թվականին Երևանի, Սուրմալուի և Նա-խիջևանի զավառներից՝ 4.546 մարդ, 1892-ին՝ 4.655, 1893-ին՝ 5.326 մարդ, իսկ Նոր Բայազետի զավարից՝ աշխատունակ տղամարդ բնակչության 18-20%-ը։ Այդ գործընթացին մասնակցում էին ոչ միայն հայեր, այլև Հայաստանում ապ-րոդ տարբեր էթնիկ խմբեր՝ քրդեր, ռուսներ, հույներ։

1912-1914 թթ. Երևանի նահանգում շուրջ 800 գյուղերից արտագնացու-թյան էր դիմել 119.5 հազ. մարդ, որից 37.5%-ը՝ նահանգի սահմաններ, 53%-ը՝ նահանգի սահմաններից դուրս, 5%-ը՝ արտասահման։ Արևելյան Հայաստա-նից հիմնականում արտագնացության էին մեկնում առևտրաարդյունաբե-րական խոշոր կենտրոններ՝ Բաքու, Թիֆլիս, Բաքում, Գրոզնի, Ելիզավետ-

պոլ երբեմն նաև Միջին Ասիա, Սիբիր, իսկ արտերկրներից՝ Հունաստան և Ամերիկա: Արտագնացության այս ձեր շատ էր տարածված հասլավես այն ընտանիքներում, որտեղ կար երկու և ավելի աշխատունակ հասակի տղամարդ: Հիմնականում արտագնացության էր մեկնում ընտանիքի երիտասարդ կամ ամուսնացած տղաներից մեկը, և հաճախ ընտանիքի անդամների միջև տեղի էր ունենում աշխատանքի բաժանում՝ պանդխտության մեկնողը պետք է դրսում դրամ վաստակեր, իսկ տանը մնացողը վարեր տնտեսությունը:

Արտագնացության էին մեկնում նաև արհեստավորները՝ ատաղձագործները, հյունները, բրուտները և ներկարարները: Օրինակ, Նոր Բայազետի գավառում շատ էր ներկարար արհեստավորների թիվը, որոնք հռոգործական աշխատանքներն ավարտելուց հետո մեկնում էին Թիֆլիս, կամ զանգեզուրցիները, որոնք բրուտության մեջ վարպետներ էին և իրենց արհեստը կիրառում էին Հայաստանի տարբեր շրջաններում: Այդ տարիներին տղամարդկանց հետ արտագնացության են մեկնել նաև կանայք, որոնց քանակի վերաբերյալ բացակայում են վիճակագրական հավաստի տվյալներ:

Օտար միջավայրի հետ շփումների շնորհիվ արտագնացները գյուղական կենցաղ էին ներմուծում քաղաքային մշակույթին բնորոշ մի շարք տարրեր՝ նպաստելով նահապետական գերդաստանների քայլայման գործընթացի արագացմանը և փոքր ընտանիքների ձևափորմանը: Արտագնացի երկարատև բացակայությունը երբեմն հանգեցնում էր ընտանիքներում ամուսնալուծությունների թվի աճին, նաև ընտանիքում սեռավարակային հիվանդությունների տարածմանը: Արտագնացությունը խթանեց նաև հայերի և Հայաստանում բնակվող տարբեր էթնիկ հանրույթների տարածքային շարժունությունը՝ կապելով նրանց Անդրկովկասի մի շարք քաղաքների հետ:

## 2.2. Խորհրդային Հայաստանի բնակչության աշխատանքային

### միգրացիան (XX դարի սկիզբ -XX դարի 90-ական թթ.)

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը, տնտեսական և հասարակական-քաղաքական հարաբերություններում տեղի ունեցած փոփոխություններն իրենց ազդեցությունը թողեցին աշխատանքային միգրացիայի բնույթի, բովանդակության, դրսորման ձևերի և միտումների վրա: Փոխվեց նաև Հայաստանի բնակչության արտաքին աշխատանքային միգրացիայի ուղղությունը: Արտագնացության տևմակերը շարունակում էին բարձր մնալ Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններում: Ծայրահեղ աղքատության, գրծագրկության և սակավահողության պատճառով նրանք կրկնին մեկնում էին արդյունաբերական կենտրոններ աշխատանք փնտրելու: Ոչ լրիվ տվյալներով 1925թ. արտագնացության է մեկնել 23.655, իսկ 1926թ.՝ 65.000 մարդ, որից 30.000-ը՝ Հայաստանի սահմաններից դուրս, մեծ մասամբ Բաքու և Թիֆլիս: Այդ շրջանում տնտեսության զարգացման նպատակով կառավարությունը միգրացիոն գրծընթացների դեկավարման համար կիրառեց վարչական մոտեցում՝ համապատասխան օրենքների և որոշումների միջոցով արտագնացների շրջանում իրականացնելով կազմակերպված ձևով որակյալ

կարերի հավաքագրում:

Հայրենական մեծ պատերազմի ընթացքում, բնականաբար, արտագնացության գործընթացն ընդհատվեց: Այն Խորհրդային Սիուժունում հետզհետև աշխատացավ 1950-1960-ական թվականներին կապված պատերազմից հետո երկրի տնտեսության վերականգնման, ինչպես նաև Ղազախստանի, Սիրիի, Ուրալի, Պովլովի շրջաններում խամ ու խոպան հողերի յուրացման հետ, որին ակտիվ մասնակցություն ցուցաբերեց նաև Հայաստանը: Խորհրդային Հայաստանից կազմակերպված հավաքների միջոցով մի շաբթ որակյալ մասնագետներ մեկնեցին այդ շրջաններ աշխատելու: Այն նշանափորեց արտագնացության զարգացման նոր փուլ՝ պէտությունը կիրառեց միջրացիայի կառավարման վարչականացական մոտեցում՝ ընդհուպ որոշ ընտանիքների վերաբնակեցում այդ շրջաններում: Այդ մոտեցումը հանգեցրեց սեղոնային արտագնացական աշխատանքի մասշտաբների ընդլայնման: ԽՍՀՄ-ում արտագնացների տարեկան միջին թիվը 1970-ական թվականներին տատանվել է 1-2.3 միլիոնի սահմաններում: Արտագնացությունը նախկին խորհրդային տարածքում վերածվել էր աշխատուժի փոխանակման յուրահատուկ ձևի՝ աշխատանքային ռեսուրսների ավելցուկ ունեցող տարածքներից դեպի դրանց կարիքն ունեցող շրջաններ. այս առումով էական գործոն էին նաև աշխարհագրական և ելքի ու մուտքի տարածքների միջև եկամուտների տարբերությունները: Միայն Հայաստանից արտագնացության էր մեկնում մոտ 25-30 հազ. մարդ: 1988թ. Հայաստանում տեղի ունեցած աղետավի երկրաշարժի հետևանքով կրծատվեց հանրապետությունից արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Արտագնա խմբերի հիմնական մասը երկրաշարժից անմիջապես հետո մնաց տեղում՝ ընդգրկվելու շնչարարական աշխատանքներում և ակտիվ աշխատանքներ ծավալելու աղետի գոտու վերականգնման համար: Արտագնացության չափերի վրա իր ազդեցությունը թողեց նաև Արցախյան պատերազմը: Հատկապես սահմանամերձ գոտու միջրանտները հայրենիքը պաշտպանելու նպատակով այդ տարիներին չմեկնեցին արտագնա աշխատանքի մասնակցելով ռազմական գործողություններին: Խորհրդային տարիներին սեղոնային միջրանտների քանակը հատկապես բարձր էր Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններից, որը, ի տարբերության Արարատյան հարթավայրի և քաղաքային բնակչության, պայմանավորված էր աշխարհագրական դիրքով, բնակչիմայական առանձնահատկություններով: Այն իր ազդեցությունն էր թողնում զյուղատնտեսական ուղղվածության, սոցիալական ենթակառուցվածքների զարգացման, բնակչության զբաղվածության և, ընդհանուր առմամբ, կյանքի պայմանների վրա:

Խորհրդային շրջանում արտագնացությունն իր անմիջական ազդեցությունն ունեցավ Հայաստանի զյուղական բնակավայրերի սոցիալական կառուցվածքի, տնտեսական, սոցիալ-մշակութային հարաբերությունների վրա՝ դառնալով էական գործոն նոր իրողությունների դրսուրման համար: Այդպիսի նոր իրողություն կարող էնք համարել նախկին մի շաբթ քաղաքային և

արտագնա գյուղական բնակչության շրջանում տեղի ունեցող սոցիալ-մասնագիտական և սեռատարիքային կազմի փոփոխությունը: Այլէթնիկ միջավայրում տեղի բնակչության հետ նրանց ակտիվ և երկարաժամկետ միջանձնային շփումների հետևանքով արտագնա համայնքների սոցիալ-մշակութային նկարագրում դիտարկվում էին նոր դրսուրումներ: Ոչ արտագնա բնակչավայրերի հետ համեմատած՝ դրանք տարբերվում էին իրենց արտաքին բարեկեցիկ տեսքով: Նրանց նյութական, հոգևոր և սոցիոնորմատիվ մշակույթում դիտարկվում էին որոշակի փոփոխություններ՝ դրսուրվելով ոչ միայն գյուղական, այլև քաղաքային, ինչպես նաև այլէթնիկ միջավայրում ձեռք բերված ապրելակերպին բնորոշ երևույթներով: Մյուս կողմից այլէթնիկ միջավայրում հայ արտագնացները մեծ ներդրում ունեին այդ բնակչավայրերի սոցիալական և մշակութային ենթակառուցվածքների ստեղծման գործում:

### **2.3. Աշխատանքային միգրացիայի զարգացման արդի միտումները**

Հայաստանի անկախությունից հետո տնտեսական ճգնաժամի, գործազրկության բարձր մակարդակի, աղքատության, բնակչության կենսամակարդակի կորուկ անկման և սոցիալական շերտափիրման պատճառով մի քանի անգամ ավելացավ Հայաստանից աշխատանքային միգրացիայի մեկնողների թիվը: Եթե խորհրդային տարիներին այն հիմնականում ընդգրկում էր լեռնային և նախալեռնային շրջանների գյուղական բնակավայրերը, կրելով սեզոնային բնույթ, ապա հետխորհրդային փուլում դրան մասնակցեց Հայաստանի գործե բոլոր մարզերի քաղաքային և գյուղական բնակչությունը՝ կրելով նաև երկարաժամկետ բնույթ: Մոտավոր հաշվարկներով Հայաստանից աշխատանքային միգրացիայի մեկնողների թիվը տարեկան կազմում է 60 հազ. մարդ: Փոխվեցին նաև Հայաստանի բնակչության արտաքին աշխատանքային միգրացիայի ուղղությունները:

Հետխորհրդային Հայաստանի արտաքին միգրացիոն տեղաշարժերի, ներառյալ աշխատանքային միգրացիայի միտումները, պայմանականորեն կարող ենք բաժանել մի քանի փուլի:

**Առաջին փուլ (1991-1995 թթ.)**՝ Հայաստանից մեկնել է մինչև 1 մլն մարդ, կամ յուրաքանչյուր հինգերորդ բնակիչ մշտապես կամ ժամանակավորապես թողել է երկիրը: Նրանց գերակշռող մասը երիտասարդ, աշխատունակ տարիքի էր: Որպես արտագաղթի բարձր միտման կարևոր ցուցանիշ՝ հարցման մասնակիցները երեմն մատնացուց էին անում բարձրահարկ շենքերի բնակարանների լուսերը չլարվելու հանգամանքը, ինչպես նաև ըստ փողոցների հաշվում էին, թե քանի առանձնատան դուռ է կրղղերով փակված: Այդ փուլում Հայաստանի դատարկվելու մասին էր փաստում նաև յուրաքանչյուր արտագաղթողից հետո ժողովրդի մեջ լայն տարածում ստացած «վերջինը աերոպորտի լույսերը անջատելու» տարածված արտահայտությունը: Որպես արտագաղթի ցուցիչ նշվում էր նաև համայնքներում երիտասարդ տղամարդկանց բացակայությունը: Նրանք հաճախ էին բերում թաղման արարողությունների օրինակը, որը հիմնականում կատարվում էր տարեցների և

կանանց մասնակցությամբ:

**Երկրորդ փուլ (1996-2001 թթ.)**՝ դիտարկվել է Հայաստանից արտազայթի միտումների նվազեցում՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական վիճակի կայունացման հանգամանքով: Ըստ վիճակագրական տվյալների այդ տարիներին Հայաստանից մշտական կամ ժամանակավորապես մեկնել է մոտ 250 հազ. մարդ կամ հանրապետության բնակչության 8%-ը: Այդ փուլում արտագաղթի առանձնահատկություններից մեկն է ընտանիքների միավորումն էր արտերկրում գտնվող հարազատների հետ: Հիմնականում մեկնում էին ընտանիքների երիտասարդ անդամները, իսկ տարեց ծնողները, երեխն նաև դպրոցականակ երեխները մնում էին տերում:

**Երրորդ փուլ (2002-2008 թթ.)**՝ Հայաստանից մշտական կամ ժամանակավոր մեկնողների թիվը կազմել է մոտ 29 հազ. մարդ: Նախկին փուլերի հետ համեմատած՝ նվազման միտումները մասնագետները պայմանավորում են համաշխարհային տնտեսական ճգնաժամով և դրամ աշխատատեղերի կրծատման հանգամանքով: Այդ փուլում Ռուսաստանի Դաշնությունը նախկին խորհրդային երկրների բնակչության շրջանում կիրառեց «Հայրենակիցներ» ծրագիրը, որի շնորհիվ 2014 թվականին 282 հազ. մարդ ներգաղթեց Ռուսաստան, որից 6 784-ը Հայաստանից:

**Չորրորդ փուլ (2009-2015 թթ.):** Այս փուլում տեղի ունեցավ Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը, որն իր ազդեցությունը բոլոր հանրապետությունից ՌԴ աշխատանքային միգրացիայի միտումների վրա: Այդ տարիներին ՌԴ-ում ընդունվեցին մի շարք նոր օրենքներ, որոնցով դյուրագվեց Հայաստանից արտազնա աշխատանքի մեկնելու կարգը: Այդ տարիներին Հայաստանից մշտական կամ ժամանակավոր մեկնողների թիվը կազմել է 274.6 հազ. մարդ: Այնուհանդերձ, ՌԴ օրենսդրությունը շատ խիստ է գործում այն օտարեկրյա միգրանտների նկատմամբ, որոնք խախտել են գործող օրենքներով այնտեղ գրանցվելու և մնալու համար նախատեսված ժամկետները: Դրա հետևանքով մեր հայրենակիցներից մոտ 30 հազ. մարդ, հայտնվելով «սև ցուցակում», մուտք չի կարող գործել այդ երկիր: Զարցագրույցի մասնակիցները միգրանտների համար ՌԴ-ում գործող «սև ցուցակը» երեխն համեմատում էին Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ընտանիքին «սև թուղթ» ուղարկելու հետ՝ համարելով հավասարացր երևույթներ:

Արտաքին միգրացիոն գործընթացներին անմասն շմնացին նաև Հայաստանի ազգային փոքրամասնությունները: Վիճակագրական տվյալների վերլուծությունից պարզվեց, որ նորանկախ Հայաստանի շուրջ քսան տարիների ընթացքում ազգային փոքրամասնությունների բացարձակ քսանակը նույնպես ցուցաբերեց հական նվազման միտումներ:

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱԾԱՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԷԹՆՈՍԴՐԱՄԱԿՐՈԱԳՐԱԿԱՆ ԲՈՂՈՔԱԳԻՐԸ  
ՀԵՏԽՈՐՉՄԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Այս զիտում խորհրդային և հետխորհրդային էթնոսցիոնգիական համեմատական նյութերի հիման վրա ներկայացվել են աշխատանքային միջանանունների սեռատարիքային և կրթական բնութագրերում, ընտանիքի կազմում և կառուցվածքում, այդ խմբերի ձևավորման գործում դրսերվող փոփոխությունները և նոր միտումները:

**3.1. Աշխատանքային միգրանտների սեռատարիքային կազմը**

**և կրթական մակարդակը**

Աշխատանքային միգրանտների 60.3%-ը ալտիվ աշխատունակ տարիքում է, և նրանց աշխատունակ իրացվում է հանրապետությունից դուրս: 95.4% ընտանիքներում աշխատանքային միգրացիային մասնակցում են տղամարդիկ, իսկ 4.6% տնտեսություններում՝ կանայք: 1987թ. իրականացրած էթնոսցիոնգիական հետազոտության արդյունքների հետ համեմատած՝ ներկա պայմաններում կանանց մասնակցության ցուցանիշն աճել է, որն արձանագրում է նաև հայ ընտանիքում նրանց կարգավիճակներում և դերերում տեղի ունեցած փոփոխությունները, քանի որ ավանդաբար այդ աշխատանքներով հիմնականում զբաղվել է տան տղամարդը: Որոշակի փոփոխություններ են դիտարկվել նաև խորհրդային և հետխորհրդային շրջանի միգրանտների կրթամակարդակում: բարձր տոկոս են կազմում միջնակարգ-մասնագիտական կրթություն և որակյալ շինարարական մասնագիտություն ունեցող խորհրդային շրջանի միգրանտները և ընդակառակը՝ ցածր տոկոս՝ բարձրագույն կրթությամբ արտազնա աշխատանքի մեկնողները (4%): Մինչեւ աշխատանքային միգրանտների կրթական ցուցանիշներն այլ են հետխորհրդային շրջանում: Հանրապետության միջին ցուցանիշներով նրանց շրջանում բարձր տոկոս են կազմում միջնակարգ (56%), այնուհետև բարձրագույն կրթություն ունեցողները (19.3%): Այսինքն հետխորհրդային շրջանում բարձր է աշխատանքային միգրացիայի մեկնողների կրթական մակարդակը, սակայն ցածր է շինարարական մասնագիտական որակավորումը: Զնայած բարձրագույն կրթության փաստին՝ այսուհետեւ, ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք մուտքի երկրների աշխատաշուկայում զբաղեցնում են ավելի ցածր որակավորում պահանջող աշխատատեղեր: Սա նշանակում է, որ հատկապես բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց շրջանում աշխատանքային միգրացիայի ժամանակ տեղի է ունենում սոցիալական վարընթաց շարժունակություն, քանի որ նրանք հիմնականում ընդգրկվում են շինարարության ոլորտում և ստիպված կատարում որակավորում չպահանջող տարբեր տիպի աշխատանքներ: Մի սոցիալական վիճակից մեկ այլ սոցիալական վիճակի սահմանագծում հայտնվելը նրանց շրջանում ավելի է խորացնում լուսանցքայնության (մարզինալության) երևույթը, որն առավել ցայտուն է

դրսևորվում մշակույթի, սոցիալական խմբերի և դերերի փոփոխության առումով: Բացառությամբ եզրիների և քրդերի, Հայաստանի մյուս ազգային փորձամանաբարյունների աշխատանքային միգրանտների գերակշիռ մասը նույնապես ունի բարձրագույն կրթություն և միգրացիոն ակտիվության բարձր ցուցանիշներ: XIX դարի վերջի նյութերի համեմատական վերլուծությունից պարզվում է, որ խորհրդային և ներկա արտագնացությունը որոշ փոփոխություններով դեռևս պահպանում է պանդխոտության մեջնելու նախապատրաստության, սպորտույթի, ընտանիքի նկատմամբ պանդուխտի նվիրական ուժութիւնը և հրածեցած մի շաբթ տարրեր:

### 3.2. Աշխատանքային միգրանտների ընտանեկան կազմը և կառուցվածքը

Արտագնացների 72.0%-ն ունի ընտանիք, 23.8%-ն ամուրի է, իսկ ամուսնալուծվածների թիվը 4.2% է: Հետազոտության արդյունքներից պարզվում է, որ հայ ընտանիքի կազմը և կառուցվածքն իրենց ազդեցությունն են թողնում արտագնացների միգրացիոն վարքագիր ձևակրույտության արտագնա աշխատանքի է մեկնել եռասերունդ, բարդ կառուցվածք ունեցող ընտանիքներից, որտեղ աշխատունակ հասակի անդամների միջև տեղի էր ունենում աշխատանքի բաժանում: Պարզ կառուցվածք ունեցող ընտանիքից արտագնացության էր մեկնում զիյավորք, որի ժամանակավոր բացակայության ընթացքում ընտանիքը հարազատների անմիջական հսկողության կենտրոնում էր լինում: Համեմատության համար նշենք, որ պանդխոտության հետ կապված բարդ կառուցվածք ունեցող ընտանիքների անդամների միջև տեղի ունեցող աշխատանքի բաժանումը հայ իրականության մեջ լայն տարածում էր ստացել նաև XIX դարի երկրորդ կեսին:

Հետխորհրդային շրջանում ձևավորված նոր իրողությունները՝ մի հարկի տակ ապրող երկու-երեք սերունդների առկայության թվի ավելացումը, պայմանավորված նաև տնտեսական պատճառներով, նույնպես խթանում է ընտանիքից աշխատունակ տարիքի մի քանի մարդու աշխատանքային միգրացիան: Ի տարբերություն խորհրդային շրջանի, որտեղ ընտանիքի տղամարդկանցից մեկը մտում էր տեղում տնտեսություն վարելու համար և ուներ նաև վարձատրվող աշխատանք, հետխորհրդայինում այդ մոտեցումը փոխվեց, քանի որ դրան մասնակցում են ընտանիքի համարյա բոլոր այն չափահաս տղամարդիկ, որոնք հնարավորություն ունեն մեկնելու հանրապետությունից դուրս աշխատանքի: Ի տարբերություն խորհրդային շրջանի՝ հետխորհրդային տարիներին արտագնա աշխատանքի պատճառով երիտասարդ, միջին և ավագ տարիքային խմբերի շրջանում ավելացան նաև այլ կազմ (մայրերեխաներ, հայր-երեխաներ, տատ, պապ-քոռներ) ունեցող ընտանիքները: ՀՀ ազգային փոքրամասնություններից եզրիների և քրդերի մեջ պահպանվող եռասերունդ ընտանիքներից նույնպես արտագնացության են մեկնում մեկից ավելի աշխատունակ հասակի տղամարդիկ:

### **3.3. Էթնիկ գործոնը և աշխատանքային միզբանտների խմբերի ձևավորման առանձնահատկությունները**

Հետազոտության արդյունքներով ինչպես խորհրդային, այնպես էլ հետ-  
խորհրդային շրջանի արտագնա խմբերի կազմավորման գործում իրենց ազ-  
դեցությունն են բողնում ազգակցական գործոնը և հարևանային, ընկերական  
կապերը: Առավել ընդհանուր գծերով կարող ենք առանձնացնել արտագնա  
խմբերի կազմավորման չորս ձևեր: Առաջինը ընտանեկան-ազգակցական  
սկզբունքներով կազմված խմբերն են, որոնք կարելի է բաժանել երեք ենթա-  
տիպի՝ ա) միևնույն ընտանիքի անդամներից, բ) մոտ հարազատներից, գ) հե-  
ռավոր ազգականներից: Երրորդ՝ ընկերներից և հարևաններից բաղկացած  
խմբեր: Երրորդ՝ խառը խմբեր: Չորրորդ՝ ազգային տարրեր կազմ ունեցող  
խմբեր (հայեր, եղիններ, քրդեր, ասորիններ): Վերջինս հատկապես տարած-  
ված էր խառնազգային կազմ ունեցող (հայերով և ազգային փոքրամասնու-  
թյուններով) բնակավայրերում: Արտագնա խմբերը ձևավորվում էին նաև տա-  
րածքային գործոնի հիման վրա, որտեղ գերակշռում էին նույն համայնքի ան-  
դամների կազմավորած խմբերը: Ըստ հետազոտության արդյունքների քա-  
ղաքի աշխատանքային միզբանտների մեծ մասը նախկին գյուղարնակներն  
էին, որոնք կապերը չէին խզել հայրենի գյուղի, հարազատների հետ՝ նրանց  
հետ շարունակելով մեկնել արտագնա աշխատանքի: Հետխորհրդային փու-  
լում, ի տարրերություն նախկինի, ազգակցության ինստիտուտը շարունա-  
կում է կարևորվել սակայն միջին ցուցանիշներով իր տեղը զիշելով ոչ ազ-  
գակցական սկզբունքով (ընկերներից, ծանոթներից, հարևաններից) ձևավոր-  
ված խմբերին: Ամեն միտում է գրանցվել նաև խառը սկզբունքով ձևավորված  
խմբերում: Հետխորհրդային փուլում ավելացել են նաև հայերից և հայաստա-  
նարնակ ազգային փոքրամասնություններից ձևավորված աշխատանքային  
խմբերը, ինչպես նաև աճել է մենակ մեկնողների թիվը:

## **ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԶԲԱՆՔԻ ՊԱՏՃԱՌԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Ուսումնասիրության այս գլխում վերլուծվել են խորհրդային և հետ-  
խորհրդային շրջաններում աշխատանքային միզբացիայի պատճառներում  
եթնիկ սոցիալական ցանցերի գործոնի դերը, արտերկրում նրանց գրադա-  
ծության ոլորտներում տեղի ունեցած փոփոխությունները և դրամական ծախ-  
սերի էրնումշակութային առանձնահատկությունները:

### **4.1. Աշխատանքային միզբացիայի սոցիալ-տնտեսական և կթումշակութային գործոնները**

Խորհրդային փուլում նրանց 39.0%-ը որպես արտագնացության պատճառ  
նշել է արտագնա աշխատանքի վայրում ավելի քարձր աշխատավարձ ստա-  
նալու հնարավորությունը: Արտագնացության մեկնելու հաջորդ կարևոր

դրդապատճառը (30%) տեղում համապատասխան աշխատանքի բացակայությունն էր: Արտագնացների որոշ մասը (22%) մեկնում էր աշխատանքի բնակարանի կատուցման, հարսանիքի և դատեր օժիտի համար գումար վաստակելու նպատակով: Հարցվածների 10%-ը հատկապես երիտասարդների համար արտագնա աշխատանքը համարել է նրանց սոցիալականացման՝ նոր մշակութային արժեքների և վարքի նորմերի, կանոնների յուրացման կարևոր գործնրաց: Ի տարբերություն խորհրդայինի հետխորհրդային փուլում Հայաստանի թե՛ քաղաքային և թե՛ զյուղական բնակչության շրջանում ավելացել է աշխատանքային միզրացիայի մեկնողների թիվը. որպես կարևոր պատճառ՝ նրանց գերակշռող մեծամասնությունը՝ 55.8%-ը, նշել է աշխատանքի բացակայությունը: Այդ պատասխանների հիմքը նաև հանրապետության աշխատունակ բնակչության շրջանում առկա գործազրկության և աղքատության բարձր մակարդակն է: Հետխորհրդային շրջանի աշխատանքային միզրանուների 14.6%-ը պլանավորել է դրսում գումար վաստակել տան կարուցման/զնման, 13.0%-ը՝ ամուսնության/հարսանիքի և այլ արարողությունների, 5.9%-ը՝ երկարատև օգտագործման ապրանքներ (ավտոմեքենա, կահույք և այլն) ձեռք բերելու, ընտանիքի անդամների կրթական և առողջապահական խնդիրները լուծելու համար: Հետազոտությունից պարզվեց, որ ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային փուլում, ըստ բնակչավայրի տիպի (քաղաք-գյուղ), սեփի (կին-տղամարդ) և տարիքային կազմի (երիտասարդ, միջն, ավագ), պատասխաններն ունեն որոշ առանձնահատկություններ: Ազգային փոքրամասնությունների գերակշռող մասը միզրացիայի պատճառները նույնպես պայմանավորում է Հայաստանում աշխատանքի բացակայությամբ: Այսպիսով, ընտանիքի կենսաապահովման գործառությը կարևոր ազդեցություն է ունեցել ոչ միայն նախախորհրդային և խորհրդային, այլև հետխորհրդային շրջանի աշխատանքային միզրանուների վարքագծի ձևավորման վրա:

#### **4.2. Աշխատանքային միզրանուների սոցիալ-մասնագիտական կազմը և գրաղվածության ոլորտները**

Հետազոտության արդյունքներով խորհրդային և հետխորհրդային շրջանի աշխատանքային միզրանուների սոցիալ-մասնագիտական կազմում տեղի է ունեցավ որոշակի փոփոխություն: Խորհրդային փուլում այդ գործընթացին մասնակցում էին երկար տարիների փորձ և հմտություններ ունեցող ոչ արդյունաբերական (56.1%) և արդյունաբերական ոլորտի (27.5%) որակյալ մասնագետներ: Դրանում ցածր տոկոս են կազմել որակավորում չունեցող ֆիզիկական աշխատողները (9%), ծառապողները (9%) և բարձր որակավորմամբ մտավոր աշխատողները (2.6%): Սակայն մի քանի սեղն արտագնացության մեկնելուց հետո վերը նշված սոցիալ-մասնագիտական խմբերում տեղի են ունեցել որակական ու քանակական փոփոխություններ: Հետխորհրդային շրջանում նրանց սոցիալ-մասնագիտական կազմի շուրջ կեսը ֆիզիկական աշխատանք կատարողներն են, իսկ մոտ մեկ հինգերորդը՝ ծառապող-

ներ և միջին որակավորմամբ մասնագետներ: Հետազոտության արդյունքների համաձայն՝ բարձր որակավորմամբ մասնագետների միջին ցուցանիշը միգրաստների շրջանում կազմել է 19.2%, իսկ դեկավարներինը և գործարարներինը՝ 5.2%: Բարձրագույն կրթությամբ այդ անձանց շատ փոքր մասն է կարողանում դրամ իր մասնագիտությամբ համարժեք աշխատանք գտնել: Ստիպված ընդգրկվում են իրենց որակավորմանը չհամապատասխանող ցածր աշխատանքներում: Այդ հանգամանքը բացասաբար է ազդում նրանց մասնագիտական զարգացման կարողությունների վրա: Միգրանտները, հայտնվելով նախկինում ունեցած իրենց սոցիալական կատուցվածքների և նորմերի, մշակութային սահմաններից դրւու սեփական և այլերնիկ միջավայրի իրողությունների միջակայքում, լիարժեքորեն չեն ներառվում ո՛չ մեկում և ո՛չ էլ մյուսում: Սակայն կրթական և բարձր որակավորում ունեցող միգրանտներին ոչ այդքան այդ երևոյթը է մտահոգում, որքան սեփական ընտանիքի առաջնային կարիքների բավարարումը: Աշխատանքային միգրացիայի մեկնելուց հետո ՀՀ ազգային փոքրամասնությունների սոցիալ-մասնագիտական կազմում նույնական գերակշռություն է ներկայական աշխատանք կատարողները, թեև մինչև մեկնելը ուսուների 2.2%-ը, աստրիների 1.3%-ը և հույնների 1.1%-ն ունեցել են բարձրագույն կրթություն:

#### **4.3. Էթնիկ սոցիալական ցանցերը և Հայաստանից աշխատանքային միգրացիայի ուղիները**

Հայաստանից արտագնացների 94.1%-ը աշխատանքի է մեկնել Ռուսաստանի Դաշնություն: Դրան նպաստում են նաև երկրի վերաբերյալ համեմատաբար բարձր տեղեկացվածությունը, վիզային պահանջների բացակայությունը, լեզվական արգելվների հաղթահարումը, ընդհանուր մշակութային արժեքների առկայությունը և ՈԴ-ում մեծաքանակ հայկական համայնքի առկայությունը: 1990-ական թվականներից հետո ընդլանվել են արտագնացության մեկնողների աշխարհագրական սահմանները. բացի ԱՊՀ-ից, նրանց 2.0%-ն աշխատանքի է մեկնել Լեհաստան, Հունգարիա, Բելգիա, Իսպանիա, ԱՄՆ, Գերմանիա, Հունաստան, Ֆրանսիա: Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների որոշ մասը թեև ունի իր ազգային պետությունը, սակայն նրանց գերակշիռ մասը նույնական շարունակում է մեկնել ՈԴ, իսկ 22.2 %-ը՝ հիմնականում Ֆրանսիա, Հունաստան և Գերմանիա: Ֆրանսիա և Գերմանիա մեկնողների մեջ բարձր տոկոս են կազմում եգիները և քրդերը: Հետազոտության արդյունքներով Հայաստանում առկա գործազրկության մակարդակը դեռևս անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է աշխատանքային միգրացիայի համար. այդ գործում էական ազդեցություն ունեն արտերկրում ձևավորված էթնիկ սոցիալական ցանցերը, որոնք կանխորոշում են նաև Հայաստանից միգրացիայի ուղությունները: Էթնիկ սոցիալական ցանցերի ձևավորման գործընթացում կարելի է առանձնացնել երեք փուլ՝ **առաջին՝ XX դարի 60-70-ական թվականներ,** երբ Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններից ամեն տարի արտագնացության մեկնողների թիվը շուրջ 25-30

հազ. մարդ էր: Նրանց որոշ մասը հետազայում հաստատեց մշտական բնակություն այլեթնիկ միջավայրում տեղական իշխանությունների հետ ստեղծելով ուղղահայաց և հորիզոնական կապերի լայն ցանց: Այդ սերունդը համարվում է ոչ միայն աշխատանքային միզգացիայի ավանդույթների կրող, այլև սոցիալական ցանցերի ձևավորող և վերարտադրող: Նրանց մի մասն օտար միջավայրում հիմք դրեց ներեթնիկ ցանցերի ձևավորման՝ միավորելով Հայաստանից նույն ծագում ունեցող խմբերին (մարտունեցիներ, լոռեցիներ, շիրակցիներ և այլն): **Երկրորդ՝** մինչև 1990-ական թվականները Հայաստանից զինվորական ծառայության, կրթության, ամուսնական և այլ պատճառներով արտերկրում բնակություն հաստատածներ և նրանց ձևավորած սոցիալական ցանցերը: Այդ շրջանի սոցիալական ցանցերի ձևավորման գործում իրենց ուրույն ազդեցությունն ունեցան 1988 թ. երկրաշարժից հետո Խորհրդային Միության տարբեր հանրապետություններից աղետի գոտում աշխատած տարբեր շինարարական կազմակերպությունների և դրանց ղեկավարների հետ ձևավորված կապերը և հարաբերությունները, որոնք հետազայում նպաստեցին հատկապես Շիրակի և Լոռու մարզից աշխատանքային միզգացիայի ակտիվացմանը: **Երրորդ՝** 1990-ական թվականներից հետո ձևավորված սոցիալական լայն ցանցերը: Դրա հիմքը հետխորհրդային Հայաստանի բնակչության արտաքին միզգացիայի թվի կտրուկ աճն էր՝ շուրջ երեքից չորս անգամ, որն այլեթնիկ միջավայրերում հայկական սոցիալական ցանցերի ձևավորման նոր ազդակ հանդիսացավ: Հետազոտության արդյունքներից պարզվում է, որ այդ ցանցերը հնարավորություն են ստեղծում նոր միզգանտներ ընդգրկելու և երկրից նոր արտահոսք ձևավորելու, միզգանտների որոշ մասի համար նվազեցնելու տեղափոխման ծախսերը, ոփակերը և մեծացնելու միզգացիայից ակնկալվող օգուտը: Աշխատանքային միզգացիան դառնում է նաև «զտիչ», որի միջով անցնում են առավել գործունյա մարդիկ, և որոնց շնորհիվ այլեթնիկ միջավայրում ձևափրկում է նաև էթնիկ ձեռներուցության երևույթը: Այլեթնիկ միջավայրում ձևավորված այդ ցանցերը նպաստում են նոր միզգանտների ինտեգրմանը, վարքագծային նորմերի վերահսկողությանը, դրսի ճնշումների հաղթահարմանը և այլ կարևոր խնդիրների լուծմանը: Սակայն դրանք ոչ բոլոր դեպքերում են դառնում հուսափի և վստահելի միզգանտների համար և երբեմն առաջացնում են մի շարք, այդ թվում՝ միզգանտների աշխատանքային շահագրծման, սոցիալ-իրավական անպաշտպանվածության և այլ խնդիրներ:

#### **4.4. Աշխատանքային միզգանտների եկամուտների ծախսերի**

##### **կառուցվածքի կթանմանակրությունները**

Հարցվածների 32.5%-ը միզգացին գործունեությունից վաստակած գումարները համարել է տնտեսության եկամուտների ձևավորման առաջին կարևոր աղբյուր: Ընդ որում՝ դրա կողմանակիցների թիվն ավելի բարձր է քաղաքային, այնուհետ գյուղական բնակչության և ազգային փոքրամասնությունների շրջանում: Թե՛ գյուղական և թե՛ քաղաքային, ինչպես նաև ազգային փոք-

բամանությունների միգրանտների գերակշռող մեծամասնությունն արտերկրում ամսական միջինը վաստակել է 700-1000 ԱՄՆ դոլար: Դրսում վաստակած այդ գումարների ծախսերի զգալի մասն ինչպես հայերի, այնպես էլ որոշ ազգային փոքրամասնությունների շրջանում ունի ազգային նկարագիր և իր ազգեցությունն է թողնում նրանց միգրացիոն վարքագծի ձևավորման գործում: Խորհրդային շրջանում բնակարանի կառուցման/գնման նպատակով կատարված ծախսերը թե՝ քաղաքային և թե՝ գյուղական միգրանտների շրջանում կազմել է 17%, իսկ ազգային փոքրամասնությունների շրջանում՝ գրեթե դրա կեսը: Խորհրդային շրջանի հետ համեմատած՝ ներկայում բնակարանի կառուցման շարժադրիթ նրանց միգրացիայի պատճառների կառուցվածքում շուրջ երեք անգամ կրճատվել է, իսկ ավելացել են ընտանիքի առաջնային կարիքների բավարարմանն ուղղված ծախսերը: Հայերի և հայաստանաբնակ ազգային փոքրամասնությունների աշխատանքային միգրանտների գերակշրջ մասն այն ուղղում է ընտանիքի սննդին, հագուստի ձեռքբերմանը, կրտսեակված պարտքերի վճարմանը: Թե՝ քաղաքային և թե՝ գյուղական բնակավայրերում այդ գումարների չնշին մասն է ներդրվում արտադրության միջոցներ ձեռք բերելու նպատակով և էական դեր չի կատարում միգրանտների համար սեփական գործ ստեղծելու առումով: Մյուս ուղղությունը, որտեղ դրսենորվում են նրանց ավանդական վարքագիծն ու մտածողության ձևերը, իրենց կամ երեխանների համար ամուսնական ծեսերի՝ հարսանիքի, օժիտի հետ կապված ծախսերն են: Ինչ վերաբերում է ՀՀ ազգային փոքրամասնություններին, ապա այդ հարցում նրանց որոշ մասը նույնպես դրսենորվում է նույն մոտեցումը: Եթե ամուսնական ծեսերի վերաբերյալ վիճակագրությունը դարձյալ համեմատենք խորհրդայինի հետ, ապա կտեսնենք, որ հետխորհրդային շրջանում միգրացիայի մեկնելու պատճառների համակարգում դրա կողմնակիցների թիվը գրեթե հինգ անգամ կրճատվել է: Վաստակած գումարներով նրանք հոգում են ընտանիքի անդամների կրթական և առողջապահական ծախսերը՝ նպատակատրդելով երեխանների կրթությանը, նրանց կարողությունների զարգացմանը, մասնագիտության ձեռքբերմանը՝ հույս ունենալով, որ հետազոյս սերունդները Հայաստանում կզտնեն աշխատանք և չեն բռնի ծնողների և պապերի արտազարֆի ճանապարհը: Այդ ծախսերը կրում են նաև ենթակրնիկ խմբերին բնորշ առանձնահատկություններ:

Ըստ հետազոտության արդյունքների՝ նրանց 84.6%-ը նշել է, որ չի մեկնի արտագնա աշխատանքի միայն այն դեպքում, եթե տեղում ապահովված լինի աշխատանքով, ընդ որում՝ նրանց 35.6%-ը կարևորել է ցանկացած, 35.3%-ը բարձր վարձատրվող, 11.2%-ը՝ մշտական, իսկ 2.5%-ը՝ մասնագիտական աշխատանքը: ՀՀ ազգային փոքրամասնությունների 84.8%-ն այդ հարցում նույնպես կարևորել է տեղում աշխատանքի առկայությունը:

**ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ**  
**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՍՈՑԲԱԼ-ՏՏԵՍԱԿԱՆ ԵՎ**  
**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵՏՎԱՆՔՆԵՐԸ**

Աշխատանքային միգրանտների արտադրական, կենսաապահովման, սոցիոնորմատիվ և հումանիտար մշակություն նոր դրսերումները հասկանալու համար վերլուծվել են միջերնիկ շփումների գործոնը, ինքնության խնդիրները, ընտանիքի մողելում տեղ գտած փոփոխությունները, ինչպէս նաև անհատի, ընտանիքի, էթնոսի և հասարակության մակարդակով այդ երևոյթի երկալի ազդեցությունը:

**5.1. Միջերնիկ շփումների ազդեցությունը միգրանտների մշակութային  
և լեզվական վարքագծի վրա**

Միգրանտների աշխատանքային գործունեությունը սեփական և այլկրնիկ միջավայրում դարձում է այն կարևոր հիմքը, որի պայմաններում ձևավորվում են նրանց մշակույթի ու կենցաղի ընդհանուր և առանձնահատուկ գծերը: Արտերկլիք մեկնող ցրված միգրացիոն խմբերը ոչ միայն արտահանում են իրենց ազգային մշակույթի որոշ տարրեր, այլև սեփական կենցաղամշակութային համայնք են ներմուծում մշակութային նոր արժեքներ: Մշակութային փոխակերպումների համար կարևոր հիմք են այլերնիկ միջավայրում տեղի բնակչության հետ նրանց շփումները: Խորհրդային շրջանում տեղի բնակչության հետ շփվել է միգրանտների 91.7%-ը, իսկ հետխորհրդայինում՝ 67%-ը, այսինքն՝ գործերէ 24.7%-ով պակաս, որը պայմանավորված է անլեզավ միգրացիայի, գործատուների հետ աշխատանքային պայմանագրերի բացակայության, անվտանգության, բնակավայրից դուրս շինարարական օրյեկտներում բնակվելու և այլ հանգամանքներով: Այդ շփումները կրում են ոչ միայն գործնական, այլև ընկերական բնույթը: Հատկապես շինարարության բնագավառում գործնական շփումները մի կողմից նպաստում էին ազգային մի շարք արհեստների արտահանմանը, հմտությունների փոխանակմանը և նորի ձեռքբերմանը, մյուս կողմից՝ կառուցվող շենքերում, բնակարանների ներքին և արտաքին հարդարանքներում՝ երեխն նաև ազգային տարրերի ներդրմանը: Ինչպէս խորհրդային, այնպէս էլ հետխորհրդային շրջանում տեղի բնակչության հետ ակտիվորեն շփվել են երիտասարդ և միջին տարիքային խմբերը: Դրանք իրենց ազդեցությունն են թողնում ոչ միայն արտագնացների պահվածքի և վարվելակերպի վրա, այլև էթնիկ կարծրատիպերի փոփոխության: Եթե խորհրդային շրջանում, շնորհիվ նաև աշխատանքային միգրացիայի, նրանց մեջ լայն տարածում եր ստացել ոուսաց լեզվի իմացությունը, ապա հետխորհրդայինում, կապված արտերկրուու աշխատելու հանգամանքի հետ, բազմաթափառությունը: Երկար տարիներ այլերնիկ միջավայրում ապրած և աշխատած Հայաստանի ազգային փոքրամասնության միգրանտների լեզվական վարքագծում նույնպէս տեղի է ունենում որոշակի փոփոխություն: Բացի մայ-

թենիից, նրանք սկսում են սովորել նաև տեղի բնակչության լեզուն՝ որպէս հաղորդակցման և սոցիալական շարժունության կարևոր միջոց։ Աշխատանքային միգրացիան ինչպես հայերի, այնպես էլ հայաստանարնակ ազգային փոքրամասնությունների և նրանց սերուղների համար վերածվել է մշակութային և կրթական կապիտալի ձևավորման նոր կարևոր աղբյուրի։

## 5.2. Աշխատանքային միգրացիան և էթնիկ ինքնության

### պահպանանական հիմնախնդիրները

Աշխատանքային միգրանտների ինքնության ձևավորումը տեղի է ունենում ոչ միայն նրանց ընտանիքի, այլև այլէթնիկ միջավայրում ձևավորված մշակութային արժեքների ազգեցության հետևանքով։ Արտերկրում հաստափած աշխատանքային միգրանտների և Հայաստանում գտնվող նրանց ընտանիքների գերակշիռ մեծամասնությունն ինքնության պահպանման հարցում լուրջ խնդիր է համարել միջէթնիկ ամուսնությունը. հայերի 52.0%-ը և ՀՀ ազգային փոքրամասնությունների 45.1%-ը (հիմնականում եգիպտացի քրդէրը և հնաբնակ ռուսները) այն համարել են անցանկայի ամուսնություն պայմանավորված այլազգիների հետ ունեցած ազգային սովորութների, մշակութային և կենցաղային, ինչպես նաև լեզվական տարրերություններով։ Այնուհանդերձ, միջէթնիկ ամուսնությունները որոշակի տարածում են ստացել աշխատանքային միգրանտների շրջանում։ Խորհրդային տարիների հետ համեմատած վերջին շրջանում դրանց թիվը որոշ չափով կրճատվել է։ Ըստ 1987թ. հետազոտության արդյունքների միջէթնիկ ամուսնությունները կազմել են 11.7%, իսկ հետխորհրդային փուլում՝ 5.8%։ Արտերկրում ընտանիքով բնակվող աշխատանքային միգրանտները տագնապում են նաև երեխանների ինքնության (մասնավորապես մայրենի լեզվի) պահպանման, հայեցի դաստիարակության և էթնիկ ինքնազիտակցության կորսափ խնդիրների համար։ Նրանք պահպանողական վերաբերունք են դրսւորում երեխանների դաստիարակության հարցում՝ տանը երեխանների հետ հիմնականում խոսում են հայերեն, ինչպես նաև շատ են կարևորում հայրենիքի հետ կապերի պահպանումը։ Այլէթնիկ միջավայրում ազգային ինքնությունը չկորցնելու նպատակով միգրանտները նշում են ազգային և կրոնական մի շարք տոներ և հիշատակի արարողություններ, որին ակտիվորեն մասնակցում է նաև տեղի բնակչությունը։ Աշխատանքային միգրանտները գերակայությունը տալիս են մենեթնիկ ամուսնություններին և կարևորում են եկեղեցին։ Մկրտության, կնունքի, պսակարության, հարսանիքի ծեսերի կատարումը, ըստ նրանց, օտար միջավայրում էթնիկ ինքնության պահպանման կարևոր գործոն է։ Արտերկրի քաղաքային և գյուղական բնակավայրերում հավաք ձևով բնակվող ՀՀ ազգային փոքրամասնությունները ինքնության հարցում նույնպես կարևորել են ազգային տոների և ծեսերի պահպանումը, որոնք մեծ շուրջով նշում են իրենց համայնքներում՝ ընտանեկան, ազգակցական և դրացիական միջավայրում։ ՀՀ ազգային որոշ փոքրամասնությունների միջին և ափազ սերուղները արտերկրում հաճախում են հայկական եկեղեցի, հայերի հետ նշում Հայաստանի

Հանրապետության Անկախության օրը, Մեծ Էղիսնի և երկրաշարժի գրեթի հիշատակի օրերը: Դրանք կրում են բուն ազգային, հայկական և այլէթնիկ միջավայրում տեղի բնակչության հետ շփումների հիման վրա ձևավորված բազմամշակութայնության որոշակի գծեր: Դրանում հայտնված աշխատանքային միջարանները և նրանց ընտանիքները դատնում են անդրազգային մշակույթի կրողներ, քանի որ մի կողմից ընդունում են այլէթնիկ մշակույթի միշտը արժեքներ, մուս կողմից հայրենիքի հետ պահպանում են ընտանեկան, տնտեսական, սոցիալական, մշակութային բազմաբնույթ հարաբերություններ:

### 5.3. Աշխատանքային միջարացիան և ընտանիքի մոդելի փոխակերպումները

Հետազոտության արդյունքներով թե՝ խորհրդային և թե՝ հետխորհրդային փուլում միջարանների համար ընտանիքը շարունակում է մնալ գերակայող արժեքը: Սակայն հետխորհրդային փուլում ազգային որոշ արժեքների կողմնակիցների թիվն ունեցել է կրծատման միտում, և ընդհակառակը ավելացել է անհատական արժեքների, մասնավորապես «նյութապես ապահովված ապրելը» կարևորող և ապագայում «լավ, հետաքրքիր աշխատանք ցանկացող» միջարանների տոկոսը: Արժեքների նկատմամբ վերաբերմունքում որոշակի տարրերություններ են դիտարկվել պայմանավորված միջարանների բնակավայրի տիպով, տարիքով և կրթական գործոնով: Աշխատանքային միջարանների ընտանիքում որոշակի փոխակերպման են ենթարկվել նաև ամուսնանալու համար ծնողներից համաձայնություն ստանալու պատկերացումները: Խորհրդային շրջանում հարցմանը մասնակցած միջարանների կեսից ավելին ամուսնանալիս կարևորել է ծնողներից համաձայնություն ստանալու հանգամանքը, ընդ որում՝ այն բարձր տոկոս է կազմել ոչ միայն երիտասարդների, այլև միջին և ավագ սերնդների միջարանների շրջանում: Մինչդեռ հետխորհրդային փուլում այդ մոտեցումը պարտադիր չհամարող կողմնակիցների թիվը կտրուկ աճել է ոչ միայն երիտասարդ, այլև ավագ տարիքային խմբերի մեջ: Ընդ որում՝ ամուսնանալիս ծնողների համաձայնությունը պարտադիր չհամարողների կողմնակիցների թիվն ավելի բարձր է քաղաքային միջավայրի և բարձրագույն կրթություն ունեցող միջարանների շրջանում: Ըստ հետազոտության արդյունքների՝ ընտանիքից միջարանի երկարատև բացակայության դեպքում նա շարունակում է մնալ տան գլխավորը և կարևոր որոշումներ կայացնողը:

Ըստ ընտանիքի վրա ունեցած ազդեցության կարևորության՝ հարցման մասնակիցների 22.4%-ն այն համարել է միջարանի բացակայության ընթացքում նրա և ընտանիքի անդամների միջև կարոտի հանգամանքը, 20.9%-ը օտար միջավայրում փունգը, 17.7%-ը միջարանի առողջական վիճակի վատացումը, 10.7%-ը՝ երեխանների դաստիարակության հետ կապված խնդիրները, 10.3%-ը՝ ընտանիքում բարոյահոգեբանական միջնորդությ վատացումը, 3.9%-ը՝ ամուսնալուծությունների թվի աճը, 3.2%-ը՝ ամուսնությունների կրծատումը և այլ հիմնախնդիրներ: Աշխատանքային միջարացիան լուրջ մար-

տակրավեր է ընտանիքների ամրությանը և հիմք՝ ընտանիքի մոդելի փոխակերպումների համար, որը ըստ հետազոտության արդյունքների, ունի հետևյալ դրսառումները. ամուսնալուծված և լրված ընտանիքների, «կիսված ընտանիքների» թվի ավելացում, երկու ընտանիք պահելու երևոյթի տարածում՝ մի ընտանիքը տեղում, մյուսը՝ արտագնա աշխատանքի վայրում, ընտանիքում տցիալ-հոգեբանական մթնոլորտի փոփոխություն և լարվածություն: Տղամարդու երկարաւե բացակայությունը ոչ միայն հիմք է ընտանիքում կոնֆլիկտների աճի համար, այլև նրանց կարգավիճակների և դերերի, ներընտանեկան հարաբերությունների փոփոխության:

#### **5.4. Մոցիալ-մշակութային և կրթաժողովրդագրական փոխակերպումները աշխատանքային միգրանտների շրջանում**

Անհատական, ընտանեկան, էքնիկական և հասարակության մակարդակով աշխատանքային միգրացիան Հայաստանի համար ունենում է երկակի ազդեցություն՝ բացասական և դրական հետևանքներով:

Բացասական ազդեցությունը դրսառություն է հետևյալ կերպ.

**անհատական մակարդակ՝** ակտիվ աշխատունակ տարիքի անհատների մշտական բնակավայրի փոփոխություն, բարոյական նորմերի և հարազատ միջավայրի հետ կապերի թուլացում, հայրենիքից դուրս աշխատուժի իրացում, աշխատանքային շահագործման ռիսկերի մեծացում, միգրանտի առողջական վիճակի վատթարացում, մշակութային դիմազգի փոփոխություն.

**ընտանեկան մակարդակ՝** հանրապետությունից դուրս ամբողջ ընտանիքի և հարազատների շղթայական արտազադր, ընտանիքների քայլացում, ծննդյան անկում, հարաբերությունների լարվածություն և օտարում, երեխաների դաստիարակության հետ կապված խնդիրներ, միգրանտի ճակատագրի նկատմամբ վախի, տագնապի մեծացում, ընտանիքում սեռավարակից հիվանդությունների տարածում, ընտանեկան նորմերի թուլացում, տնային աշխատանքներում կանանց, երեխաների, տարեցների գրադաժության մեծացում.

**էքնիկական մակարդակ՝** հայրենիքից դուրս էթնոսի անդամների վերաբուղություն, հայրենիքում էթնոսի ծերացման միտումների աճ, էքնիկ արժեքների և ինքնության փոփոխություն, էքնուկապերի թուլացում, բարոյահոգեբանական նորմերի թուլացում և միջերնիկ կոնֆլիկտների ռիսկերի մեծացում, պահպանողականության ուժեղացում.

**ՀՀ հասարակության մակարդակով՝** արտազադրի միտումների ընդլայնում, ժողովրդագրական լարվածություն, որակյալ աշխատուժի արտահոսք, կարգավիճակների և դերերի փոփոխություն, տցիալական շեղվածություն, տցիալական կապիտալի սպառում:

Աշխատանքային միգրացիան ունենում է նաև հետևյալ դրական ազդեցությունը.

**անհատական մակարդակ՝** գրադաժության ապահովում, աշխատանքային կենսափորձի և նոր մասնագիտությունների յուրացում, տցիալիզացիա,

անկախության և ինքնուրույնության ամրապնդում, մշակութային նոր տարրերի ձեռքբերում և արտաքին աշխարհի հետ ծանոթացում, երկլեզվության և բազմալեզվության տարածում, կրթական և մշակութային կապիտալի ստեղծում, սոցիալական կապերի ընդլայնում.

**Ընտանեկան մակարդակ**՝ նյութական ապահովում, նախասկզբնական կապիտալի կուտակում, ընտանիքի անդամների կրթության, մասնագիտության ձեռքբերման, առողջապահական հարցերում ֆինանսական աջակցություն, նոր արժեքների փոխանցում, ավելի լավ ապագա ստեղծելու հնարավորությունների ընդլայնում, գրքագրկության և աղքատության հաղթահարում, ազգակիցներին և հարազատներին օգնություն, սոցիալական և մշակութային կապիտալի կուտակում.

**Էթնիկական մակարդակ՝** էթնոսի մեկուսացվածության հաղթահարում և վերարտադրություն, միջմշակութային փորձի փոխանակում, արտադրական կենսաապահովման, սոցինորմատիվ և հումանիտար մշակույթի համայնքի հարստացում, բարեգործության մշակույթի զարգացում, էթնիկ ձեռներեցության զարգացում, սոցիալական ցանցերի ընդլայնում.

**ՀՀ հասարակության մակարդակ՝** ՀՆԱ-ի ներդրումների ավելացում, սոցիալական ոլորտի փոխակերպման գործընթացներում ձախողումների մեղմացում և չեղքացում, շփումներում փորձի հարստացում, սոցիալական լարվածության թուլացում, Հայաստանում գործարարության զարգացման հնարավորությունների մեծացում, բարեգործության նոր մշակութային արժեքների տարածում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսությունում քննարկված հիմնախնդիրների համակողմանի վերլուծությունը հնարավորություն տվեց կատարելու հետևյալ եզրահանգումները.

- Նախախորհրդային շրջանում արտագնացությունը խթանեց Հայաստանի քննակշռության տարածքային շարժունությունը, նոր սոցիալ-մշակութային արժեքների ձևավորումը և հայ իրականության մեջ գոյություն ունեցող նահապետական գերդաստանների քայլայման գործընթացի արագացումը:
- Խորհրդային շրջանում արտագնացության երևույթն իր անմիջական ազդեցությունն ունեցավ Հայաստանի զյուղական քննակավայրերի սոցիալական կառուցվածքի, տնտեսական, սոցիալ-մշակութային հարաբերությունների վրա դաշնալով էական գործոն նոր իրողությունների դրսնորման համար: Դրանցից էին նախիմին մի շաք քաղաքային և արտագնա զյուղական քննակշռության շրջանում տեղի ունեցող էթնոժողովրդագրական, սոցիալ-մասնագիտական և սեռատարիքային կազմի, արտադրական, կենսաապահովման, սոցինորմատիվ և հումանիտար մշակույթում տեղի ունեցող փոփոխությունները: Այն դարձավ

հայրենի միջավայրում մշակութային նոր արժեքների փոխանցման կարևոր միջոց:

- Հայաստանի անկախությունից հետո սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական փոփոխություններն իրենց ազդեցությունը թողեցին աշխատանքային միջրացիայի բնույթի, բովանդակության, որսուրման ձևերի և միտումների վրա: Ի տարբերություն խորհրդայինի, որին հիմնականում մասնակցում էր Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջանների բնակչությունը և ուներ ընդգծված սեզոնային բնույթ, ապա հետխորհրդայինում դրան մասնակցեց Հայաստանի գրեթե բոլոր մարզերի քաղաքային և գյուղական բնակչությունը՝ կրելով նաև երկարատև բնույթ: Փոխվեցին նաև Հայաստանի բնակչության արտաքին աշխատանքային միջրացիայի ուղղությունները:
- Խորհրդային և հետխորհրդային համատեքստում որոշակի տարբերություններ դիտարկվեցին աշխատանքային միջրանտների երնիկ, սեռատարիքային կազմի և կրթական բնութագրերի միջև: Ի տարբերություն խորհրդայինի, որտեղ ցածր էր հայ կանանց մասնակցությունը, իսկ տղամարդկանց շրջանում բարձր տոկոս էին կազմում միջնակարգ-մասնագիտական կրթություն ունեցողները, հետխորհրդային շրջանում, ընդհակառակը, ոչ միայն աճեց կանանց թիվը, այլև բարձրագույն կրթություն ունեցող աշխատանքային միջրանտների թիվը:
- Հայերի և հայաստանաբնակ որոշ ազգային փոքրամասնությունների ընտանիքի կառուցվածքի ատանձնահաստիկությունները (մասնավորապես մի հարկի տակ ապրող երկու-երեք սերունդների առկայությունը) խթանեցին նրանց միջրացիոն վարքագծի ձևավորումը և ընտանիքից մի քանի աշխատունակ տարիի մարդկանց աշխատանքային միջրացիան: Ի տարբերություն խորհրդային շրջանի, որտեղ ընտանիքի տղամարդկանցից մեկը մնում էր տեղում տնտեսություն վարելու և ուներ նաև վարձատրվող աշխատանք, հետխորհրդայինում այդ մոտեցումը փոխվեց, քանի որ դրան մասնակցում են ընտանիքի համարյա բոլոր այն չափահաս տղամարդիկ, որոնք հնարավություն ունեն մեկնելու հանրապետությունից դրու աշխատանքի:
- Եթե խորհրդային շրջանում աշխատանքային միջրացիայի խմբերը ձևավորվում էին ազգակցական և տարածքային գրծոնի հիման վրա, ապա հետխորհրդային փուլում ազգակցության ինստիտուտը միջին ցուցանիշներով իր տեղը զիջեց ոչ ազգակցական սկզբունքով ձևավորված խառը խմբերին: Խորհրդայինի հետ համեմատած՝ մյուս կարևոր առանձնահաստկությունն այն է, որ բարձր տոկոս է կազմել աշխատանքային միջրացիայի ինքնուրույն մեկնողների քանակը:
- Եթե խորհրդային փուլում արտագնացության պատճառները պայմանավորված էին դրսում ավելի բարձր աշխատավարձ ստանալու հնարավորությամբ և տեղում մասնագիտական աշխատանքի բացակայու-

- թյամբ, ապա հետխորհրդային փուլում՝ զանգվածային գործազրկության և աղքատության հանգամանքով: Սակայն բոլոր փուլերի ընդհանրությունն այն է, որ այն վերջին հաշվով ուղղված է ընտանիքի առաջնային կարիքների բավարարմանը:
- Աշխատանքային միգրանտների սոցիալ-մասնագիտական կազմում տեղի է ունեցել որոշակի փոփոխություն: Խորհրդային փուլում այդ գործընթացին հիմնականում մասնակցում էին արդյունաբերական և ոչ արդյունաբերական բնագավառների որակյալ մասնագետներ: Հետխորհրդային փուլում այդ խմբերի շուրջ կեսը ֆիզիկական աշխատանք կատարողներն են, մոտ մեկ հինգերորդ՝ ծառայողներ և միջին որակավորմամբ մասնագետներ, 20%-ը՝ բարձր որակավորմամբ մասնագետներ, իսկ 5%-ը՝ դեկավարներ և գործարարներ: Սակայն վերջիններիս շատ փոքր մասն է կարողացել դրսում իր մասնագիտությամբ համարժեք աշխատանք գտնել. նրանք ստիպված ընտգրկվել են իրենց որակավորումից ցածր աշխատանքներում: Այդ մասնագիտական խմբերը հայտնվեցին լրասանցքային վիճակում, որն իր հերթին խոշընդուում է նրանց սոցիալական կապիտալի բնականոն վերարտարրությանը:
  - Խորհրդային և հետխորհրդային շրջանում իրականացրած հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանից աշխատանքային միգրացիայի հիմնական ուղղությունը եղել է Ռուսաստանի Դաշնությունը: Այստեղ մեկնելու կարևոր խթան են համարվել այդ երկրի վերաբերյալ համեմատաբար բարձր տեղեկացվածությունը, վիզային պահանջների բացակայությունը, լեզվի իմացությունը և ընդհանուր մշակութային գծերը, ինչպես նաև մեծաքանակ հայկական համայնքի առկայությունը:
  - Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական պայմանները դառնում են աշխատանքային միգրացիայի կարևոր գործոն, սակայն դրանք վերածվում են միգրացիայի գրեթե անհանդաց միայն այն ժամանակ, եթե արտերկրում առկա են որոշակի էքնիկ սոցիալական ցանցեր: Դրանք կարևոր դեր ունեն միգրացիայի մեկնելու վերաբերյալ նրանց որոշումների կայացման համար և նպաստում են նոր միգրանտներ ընդգրկելու հնարավորությանը: Էքնիկ սոցիալական ցանցերը միգրանտների որոշ մասի համար նվազեցնում են տեղափոխման ծախսերը, ոիսկերը և մեծացնում միգրացիայից ակնկալվող օգուստը: Սակայն դրանք ոչ բոլոր դեպքերում են դառնում հուսայի և վստահելի միգրանտների համար երբեմն առաջացնելով միգրանտների աշխատանքային շահագործման, սոցիալ-իրավական անպաշտպանվածության և այլ լրտր խնդիրներ:
  - Այլէթնիկ միջավայրում ձևավորված սոցիալական ցանցերը նպաստում են նոր աշխատանքային միգրանտների ինտեգրմանը, վարքագծային նորմերի վերահսկողությանը, դրսի ճնշումների հաղթահարմանը և այլ կարևոր խնդիրների լրտմանը:

- Աշխատանքային միգրացիան դառնում է կարևոր գործոն, որի միջով անցնում են առավել գործունյա մարդիկ, և որոնց շնորհիվ այլերնիկ միջավայրում ձևավորվում է նաև էթնիկ ձեռներեցությունը:
- Խորհրդային փուլի հետ համեմատած աշխատանքային միգրանտների՝ բնակարանի կառուցման և ամուսնական ծեսերի հետ կապված ծախսերը կրծատվել են համապատասխանաբար երեք և հինգ անգամ, և ընդհակառակը ավելացել են ընտանիքի առաջնային կարիքների բավարարմանն ուղղված ծախսերը:
- Երեք խորհրդային շրջանում, շնորհիվ նաև աշխատանքային միգրացիայի, լայն տարածում էր ստացել ռուսաց լեզվի իմացությունը, ապա հետխորհրդայինում, կապված արտերկրում աշխատելու հանգամանքի հետ, բազմալեզվությունը:
- Աշխատանքային միգրացիան հանրապետությունից դուրս ինչպես հայերի, այնպես էլ հայաստանաբնակ ազգային փոքրամասնությունների և նրանց սերունդների համար վերածվել է մշակութային և կրթական կապիտալի ձևավորման նոր կարևոր աղբյուրի:
- Խորհրդայինի հետ համեմատած հետխորհրդային շրջանում ավելացել է պահպանողական վերաբերմունքը միջթնիկ ամուսնությունների նկատմամբ, և նրանց մեջ գերակշռում է մեներնիկ ամուսնությունների կողմնակիցների թիվը: Այդպիսի միտում է դիտարկվել նաև հայաստանաբնակ եղինների և քրերի շրջանում:
- Միգրանտի, նրա ընտանիքի, էթնոսի և հասարակության վրա աշխատանքային միգրացիան թողնում է երկակի ազդեցություն՝ դրական և բացասական առումներով:
- Աշխատանքային միգրացիան լուրջ մարտահրավեր է հայ ընտանիքի ամրության և նրա մողելի փոխակերպումների համար: Հանրապետական միջին ցուցանիշների հետ համեմատած նրանց շրջանում բարձր է ամուսնալուծված ընտանիքների թիվը: Այս վերածվում է հանրապետությունից դուրս ընտանեկան միգրացիայի, որն էլ իր հերթին հանգեցնում է արտագաղթի միտումների ավելացման և հայրենիքից դուրս էթնոսի անդամների վերաբռնադրյան:

### **Ատենախոսության բովանդակությունը արտացոլված է հեղինակի հետևյալ աշխատություններում.**

1. Սեղնային արտագնացության հիմնական գործոնները Հայկական ԽՍՀՄ-ում (ըստ էթնոտցիոլոգիական հետազոտության նյութերի), Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1989, N4, էջ 46-54:
2. Հայաստանի Հանրապետության բնակչության միջավետական տեղաշարժերը (ըստ էթնոտցիոլոգիական ուսումնասիրություն նյութերի), Շազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, 1998, 61 էջ:

3. Սոցիալական անհավասարություն-սոցիալական շարժունություն-սոցիալական կոնֆլիկտ: Համահարաբերակցություն և շարժնթացի խնդիրները Հայաստանում, Շազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, 2000, 53 էջ:
4. Ընտանիքի հիմնախնդիրները տնտեսական տեղաշարժերի համատեքստում, Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, հանրապետական գիտաժողովի նյութեր նվիրված Է. Կարապետյանի հիշատակին, Երևան, 2001, էջ 27-30:
5. Օրենքի և դատաիրավական համակարգի դերը Հայաստանի ժողովրդավարացման գործնթացում. Հիմնախնդիրներ, Շազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, 2001, 64 էջ:
6. Ընտանեկան բռնությունները Հայաստանի Հանրապետությունում (սոցիոլոգիական ուսումնասիրություն), Երևան, 2002, էջ 7-13, 72-93, 88-92, (համահեղինակ՝ Ռ. Օհանչանյան):
7. Արտագնացությունը Վայոց ձորում, Հայ ժողովրդական մշակույթ 8, Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, 2006, էջ 36-43:
8. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում II, Երևան, 2005, էջ 22-37, 111-123 (համահեղինակ՝ Յու. Մկրտումյան):
9. Հայաստանի Հանրապետությունից աշխատանքային միզգացիայի էթնոմշակութային և սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները, Ոչ նյութական մշակույթ. Ավանդական բանակը ժառանգություն, Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի շրջանակներում, Միջազգային 2-րդ գիտաժողովի հոդվածների ժողովածու (29 նոյեմբերի - 2 դեկտեմբերի, Աղվերան 2006) Երևան, 2007, էջ 135-144:
10. Շիրակի մարզի բնակչության աշխատանքային միզգացիոն գործընթացներն արդի շրջանում, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 174-178:
11. Տավուշի մարզի բնակչության տեղաշարժերը հետխորհրդային շրջանում, Հայ ժողովրդական մշակույթ XIX, Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, 2007, էջ 38-45 (համահեղինակ՝ Հ. Սարգսյան):
12. Ընտանիքի և ամուսնության հիմնախնդիրները Տավուշի մարզի աշխատանքային միզգանաների շրջանում. Տավուշ, Նյութական և հոգևոր ժառանգություն, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Իջևան, Երևան, 2009, էջ 239-244 (համահեղինակ՝ Լ. Վարդանյան):
13. Արտագնացությունը Հայաստանում (19-րդ դարի երկրորդ կես-20-րդ

- դարի 80-ական թթ.), Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, Երևան, 2009, N 26, էջ 1-88:
14. Օմիկի հայկական համայնքի ձևավորումը աշխատանքային միգրացիայի համատեքստում, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ XV, Երևան, 2010, էջ 210-218:
  15. Խառնամուսնությունները և ինքնության խնդիրները ՀՀ աշխատանքային միգրանտների շրջանում, Հայ ինքնության որակների պահպանումը խառնամուսնություններում, Գիտագրծական համաժողով, գեկուցումների ժողովածու, Երևան, 25-26 ապրիլ 2010, էջ 141-147:
  16. Աշխատանքային միգրացիան հետխորհրդային Հայաստանի գյուղական բնակչության շրջանում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2011, N1-2, էջ 164-177:
  17. Աշխատանքային միգրացիան և ընտանիքի փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2012, N2-3, էջ 254-265:
  18. Միգրացիան և մշակութային փոխակերպումները, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2013, N2, էջ 184-193:
  19. Միգրացիայի միտումները հետխորհրդային Հայաստանի բնակչության շրջանում (1991-2010), Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Հայ ժողովրդի մշակույթ XVI, Դ. Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2014, էջ 293-290:
  20. Սոցիալական ցանցերը և Հայաստանից աշխատանքային միգրացիայի ձևավորման առանձնահատկությունները, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2014, N1, էջ 203-213:
  21. Աշխատանքային միգրացիան Տավուշում, Տավուշ սոցիալ-մշակութային գործընթացներ (ավանդույթ և արդիականություն), Երևան, 2014, էջ 83-125:
  22. Տնտեսական սոցիոլոգիա, Հասարակության սոցիալ-տնտեսական ստրատիֆիկացիա (Հերտավորում), Ձեռներեցությունը որպես տնտեսական գործառույթ (Դասախոսությունների տեքստ), Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Երևան, 2014, 73 էջ:
  23. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների միգրացիան (Էթնոսոցիոլոգիական հետազոտություն), Երևան, 2015, 208 էջ:
  24. Արտագաղթի միտումները հետխորհրդային Հայաստանի ազգային փոքրամասնությունների շրջանում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2016, N1, էջ 184-195:
  25. Проблемы изучения этносоциальных аспектов сезонной миграции/ Тезисы докладов 5-ой Всесоюзной научной школы ученых-экономистов, часть II, Владимир, 1987, с. 366-367.

26. Постсоветское пространство: Этносоциальные последствия экономической миграции населения Армении/ IV конгресс этнографов и антропологов России, Тезисы докладов, Нальчик, 2001, с. 48.
27. Экономические мигранты Армении на трудовом рынке Российской Федерации/Международная научная конференция «Археология. Этнология. Фольклористика Кавказа», Тбилиси, 2004, с. 179.
28. Отходничество-важный компонент миграции армянского этноса в постсоветский период/ Материалы первого международного конгресса кавказоведов, Тбилиси, 2007, с. 228-230.
29. Основные проблемы эксплуатации трудовых мигрантов из Республики Армения/ Международная научная конференция «Археология. Этнология. Фольклористика Кавказа», Тбилиси, 2007, с. 275-276.
30. Проблемы социально-психологической адаптации армянских мигрантов в РФ/ Материалы первой международной научно-практической конференции, Пенза, 2008, с. 20-25. (соавтор Варданян М.М.)
31. Трудовая миграция/Армяне (серия «Народы и культуры»), М., 2012, с. 519-526.
32. Costs and Benefits of Labour Mobility between the EU and the Eastern Partnership Partner Countries - Country Report: Armenia, CASE – Center for Social and Economic Research, Network Studies and Analyses No. 461/ 2013, Warsaw, 2013, p. 29-38, 46-52 (համահեղինակ Makaryan G. )
33. Examining factors impacting female attitudes towards having a job in South Caucasus, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան 2014, N3, 185-199 (համահեղինակ R. Bakhtavoryan, T. Zohrabyan, H. Khachatryan)
34. Analysis of faktofs impacting rural womens labor force participation in Armenia, The problemms sustained social-economic development of Republic of Armenia, collected articles-1(23) Հայաստանի Հանրապետության տղիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնավանդիրները, Գիտական հոդվածների ժողովածու-1(23), Երևանի «Անսնիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան, Երևան, 2016, էջ 309-322 (համահեղինակ R. Bakhtavoryan, T.Dallakyan):

## **ГАЛСТЯН МИГРАН ВАРДГЕСОВИЧ**

### **СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЕ ПРОБЛЕМЫ ТРУДОВОЙ МИГРАЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

#### **РЕЗЮМЕ**

Основная цель диссертации - выяснение на основе сравнительного анализа результатов этносоциологических исследований и полевых этно-

графических материалов советского и постсоветского периодов этнокультурных и социальных изменений, которые оказывает трудовая миграция из Армении на мигрантов, их семьи, этнос и общество. Анализ материалов свидетельствует, что в досоветский период отходничество стимулировало территориальную подвижность населения Армении, формирование у него новых социально-культурных ценностей и способствовало процессу сконцентрированного распада устоев патриархального гердастана. В советский период отходничество оказывало непосредственное влияние на социальную структуру, экономические и социально-культурные отношения сельских поселений Армении, став важным фактором отражения новых явлений. Среди них отметим этнодемографические, социально-профессиональные и половозрастные изменения, происходящие в материальной, духовной и соционормативной культуре в целом ряде регионов городского и сельского населения Армении. В отличие от советского периода, когда отходничество имело ярко выраженный сезонный характер и охватывало в основном население горных и предгорных районов, в постсоветский период отходничество имеет продолжительный характер, и в нем участвует городское и сельское население почти всех марзов Армении. В контексте советского и постсоветского периода определенные изменения наблюдаются в причинах трудовой миграции, ее этническом, социально-профессиональном и половозрастном составе. В советский период более низким было участие армянских женщин в этом процессе, а среди мужчин высокий процент составляли представители с средне-специальным образованием. В постсоветский период, напротив, не только возросло число женщин, но и трудовых мигрантов с высшим образованием. Специфика структуры армянских семей, а также ряда национальных меньшинств Армении (в частности, наличие двух-трех поколенных семей, проживающих под одной крышей) способствовала формированию у них определенного миграционного поведения и трудовой миграции сразу нескольких членов семьи трудоспособного возраста. Если в советский период группы трудовых мигрантов формировались по родственному и территориальному принципу, то в постсоветский период родственный институт по своим показателям уступил место смешанным, не основанным на родстве группам, а также увеличению числа выезжающих самостоятельно. Основным направлением трудовой миграции из Армении всегда была РФ. Главными причинами этого являются отсутствие визового режима, знание (русского) языка, общность культурных черт, а также наличие многочисленной армянской диаспоры. Высокий уровень безработицы в Армении считается важным фактором трудовой миграции, однако она приобретаетственный характер только благодаря сформировавшимся в диаспоре этническим социальным сетям. Для определенной части мигрантов они сокращают не только риски и расходы, связанные с переездом, но и способствуют их интеграции в иноэтническую среду, контролю поведенческих норм, преодолению внешнего давления. Материалы исследования свидетельствуют, что средства, заработанные в результате трудовой миграции, подавляющее большинство и сельских, и городских мигрантов, в том числе и представители национальных меньшинств, в наши дни в основном

направляют на удовлетворение необходимых потребностей семьи; по сравнению с советским периодом сократились расходы, связанные со строительством дома и брачно-свадебными обрядами. Определенная часть мигрантов за счет заработанных доходов покрывает расходы на образование и здравоохранение членов своей семьи. В зависимости от продолжительности трудовой миграции, возраста и образовательного уровня мигрантов в результате общения с местным населением они в иноэтническом окружении как экспортируют свои культурные элементы, так и вносят элементы новой культуры в свой собственный культурно-бытовой облик. Миграция из республики для армян и национальных меньшинств Армении на протяжении поколений превратилась в важный источник формирования нового культурного и образовательного капитала. В иноэтнической среде она стала важным механизмом формирования этнического предпринимательства. Трудовая миграция является серьезным вызовом крепости семьи и модели ее трансформации. По сравнению со среднестатистическими показателями республики, среди трудовых мигрантов высок процент разведенных семей. Трудовая миграция способствует усилению тенденции эмиграции и воспроизводства этноса за пределами республики.

### MIHRAN V. GALSTYAN

## SOCIO-CULTURAL ISSUES OF LABOUR MIGRATION IN THE REPUBLIC OF ARMENIA

### SUMMARY

The main aim of the dissertation is to explore the ethno-cultural and social transformations and consequences of labour migration on the level of migrants, their families, the ethnos as well as society. The dissertation is based on the comparative analyses of ethno-sociological research results and ethnological field materials conducted in Soviet and post-Soviet period. The analyses of these materials showed that post-Soviet emigration promoted the mobility of Armenian population, the development of new socio-cultural values, as well as it contributed to the acceleration of the destruction process of patriarchal family structure that existed in Armenian reality. The post-Soviet emigration had its effects on the social, economic structure as well as on socio-cultural relations of Armenian rural areas. Thus, it became an essential factor for the manifestation of a new reality, such as: the transformation of ethno-demographic, socio-professional and gender-aged structure as well as material, spiritual, cultural and socio-normative changes in the society. The Soviet period of emigration had a marked seasonal character. Additionally, it was driven mainly by inhabitants of Armenian mountainous and foothill regions. The post-Soviet emigration had a long-lasting character and was driven by the inhabitants of nearly all the regions, both urban and rural areas. In the context of Soviet and post-Soviet emigration some changes were observed among the reasons of labour migra-

tion as well as among the structure of ethnic, socio-professional, gender-aged and educational characteristics. In Soviet period the share of emigrant women was low, while among men there was a high percentage of those having secondary-vocational education. In post-Soviet period, in contrary, not only the number of women was increased but also the number of labour migrants having higher education. The peculiarities of the family structure of Armenians and some ethnic minorities (particularly the presence of two or three generations living in one household) contributed to the development of migration behaviour and to the emigration of some workable aged people. If during the Soviet period labour migrants' groups were formed based on kinship and territorial bases, in post-Soviet period the factor of kinship was replaced with non-kinship principle, as well as there was an increase of the number of people emigrating individually. The main flow of labour migration has always been directed to the Russian Federation. The main reason has been the absence of demands for visa, language skills, common cultural characteristics as well as the presence of a large Armenian community. The high level of unemployment in Armenia is an important factor for labour migration. However, these factors are being realized only thanks to ethnic social networks formed abroad. Social network is an important mean for enabling and involving new labour migrants and for making the migration decision. These not only decrease the costs and risks of migration but also contribute to the integration to the new environment, easier control of behavioural norms and reduction of external pressure. The results of the research indicate that both rural and urban population as well as ethnic minorities direct earned money to meet their prior family needs. Compared to the Soviet period costs associated with the construction of housing and marriage results were reduced. Part of them also covered educational and health costs of the family members.

Depending on the duration of labour migration, the age and educational level of a migrant, as well as level of interaction with other -ethnics they invest new cultural elements in their everyday life both in the host-society and in their home country. Migration has become a source of formation of a new cultural and educational capital both for ethnic Armenians and for national minorities settled in Armenia. It has become also an important source for the development of ethnic-entrepreneurship in other-ethnic environment.

Labour migration is an important challenge for the stability of a family and for the transformation of its structures. Compared with the average index of the republic, the rate of divorces is high among labour migrants. Labour migration contributes to the increase of permanent emigration trends from Armenian as well as increase of the number of children born abroad.





